Azg Ազգ

10 ՆՈՅԵՄԲԵՐ 2004 ՇԱԲԱԹ 200 (3131)

Եվրոպայի բանկի ղեկավարի հայտարարությունը կանգնեցրել է դոլարի փոխարժեքի անկումը

ՓԱՐԻԶ, 9 ՆՈՅԵՄԲԵՐԻ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Եվրոպայի կենտրոնական բանկի (ԵԿԲ) ղեկավար Ժան Կլոդ Տրիշեի վճռական հայտարարությունը որոշ չափով հանգստացրել է աշխարհի ֆինանսական շուկաներին, որոնք երկուշաբթի օրն անհանգստացել էին եվրոյի նկատմամբ ամերիկյան դոլարի փոխարժեքի շարունակվող ուժգին անկման առթիվ: Ելույթ ունենալով Բազելում՝ Ժ. Կ. Տրիշեն հայտարարել է, թե եվրոյի եւ դոլարի փոխարժեքների ներկայիս հուժկու տատանումները «չեն ողջունվում», քանի որ դրանց շարժումը «կտրուկ» անկումների միտում ունի: Դրա հետեւանքով, դոլարի փոխարժեքը, որը երկուշաբթի կեսօրին եվրոյի նկատմամբ իջավ մինչեւ պատմական նվազագույն մակարդակ, որոշ չափով աճել է: Եվրոպայի ֆինանսական շուկաները փակվել են այն պայմաններում, երբ մեկ եվրոյի դիմաց տալիս էին 1,2925 դոլար:

Երկուշաբթի օրվա ընթացքում եվրոյի փոխարժեքն ընդհուպ մոտեցավ 1,3 դոլարի մակարդակին, ինչը չի եղել եվրոպական միասնական արժույթի գոյության ամբողջ պատմության ընթացքում:

Մեղադրանքներ իշխանություններին՝ «27»-ի անջատված մասի կարճում եւ «Արմենտել»

Խորհրդարանական հայտարարությունների ընթացքում ընդդիմադիրները եւս մեկ անգամ ներկայացան բարձրաձայնելու իշխանությունների մեղավորությունը: Այս անգամ շեշտը դրվեց «27»-ի գործից անջատման մասը կարճելու վրա: Մասնակցվեց, որ իշխանություններն այլեւս պատշաճ ձեւեր էլ չեն պահպանում, իսկ իշխանության խոսափող մամուլն անթաքույց փաստում է իշխանությունների այլասերվածությունը: Միանալով ասվածին **Հմայակ Հովհաննիսյանը** հիացմունք հայտնեց ԱՄՆ նախագահական թեկնածուների դրսեւորած քաղաքական կրթվածության հանդեպ: Այլ կերպ, ասածը քաղաքական անդասանի մշակներին դասեր առնելու տեղը ցույց տվեց Հմայակ Հովհաննիսյանը:

Արշակ Սադոյանը դիմելով բոլոր հայրենակիցներին, իրավապահ մարմիններին, ոստիկաններին տեղեկացրեց, որ ամենամոտ ապագայում տեղի է ունենալու բացահայտ անօրինականություն՝ գրպանվելու է 7 մլն դոլար ի հավելում պետությանն արդեն իսկ հասցված 170 մլն դոլար վնասի, որը ոչ այլ ինչ է, քան պետական դավաճանություն: Ինչի համար, Արշակ Սադոյանի գնահատմամբ, կառավարությունը պետք է հրաժարական տա եւ հեռանա Հայաստանից, իսկ կոռուպցիային ծախված եւ 7 մլն գրպանած անձինք պատասխանատվության ենթարկվեն: Խոսքը ՀՀ կառավարություն-«Արմենտել» իրավահարաբերությունների մասին է:

Երեկ «Արմենտելի» կենտրոնական շենքի մոտ ի նշան բողոքի հրկիզվեց «Արմենտելը» խորհրդանշող հեռախոսի մակետը:

ՆԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Հայաստան է ժամանում Էստոնիայի նախագահը

Նոյեմբերի 13-15-ը պաշտոնական այցով Երեւան է ժամանում Էստոնիայի նախագահ Առնոլդ Ռյուտելը: Այցի նախօրեին էստոնական մամուլին տված հարցազրույցում Եվրամիությանն անդամ երկրի նախագահն ասել է, որ իր այցը Հայաստան պետք է դիտարկել եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակներում եւ նկատել է, որ Հայաստանում ռուսամետ տրամադրությունները բարդ տնտեսական եւ քաղաքական իրավիճակի հետեւանք են:

Ըստ «Մեդիամախի», Էստոնիայի արտաքին գործերի նախարար Կրիստինա Օյուլանդն իր հերթին ասել է, որ «Հայաստանը մի երկիր է, որտեղ կան ուժեր, որոնք ավելի շատ ուշադրություն են ակնկալում Եվրամիության երկրներից»: «Ես չեմ կարող ասել, թե մեզ չի հետաքրքրում Հայաստանի ապագան», ասել է Օյուլանդը:

«Չնայած արտաքին քաղաքական հարցերում Հայաստանը խստորեն հետեւում է Մոսկվային, Էստոնիայի նախագահի թիմը չի կարծում, որ այդ հանգամանքը պետք է դիտարկել իբր համագործակցությունից խուսափելու պատճառ», գրում է էստոնական մամուլը:

Նկատենք, որ խորհրդային Միությունից անջատվելուց հետո սա Էստոնիայի նախագահի առաջին այցն է Հայաստան: 2002 թ. հունիսին պաշտոնական այցով Էստոնիա, Լատվիա եւ Լիտվա էր մեկնել նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Գնդակը Ադրբեջանի դատում է

Հայտարարում է Վարդան Օսկանյանը

ԵՐԵՎԱՆ, 9 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Այս անգամ գնդակը գտնվում է Ադրբեջանի դատում», «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում հայտարարեց ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը՝ մեկնաբանելով Ադրբեջանի նախաձեռնությունը, որի արդյունքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանի օրակարգ մտցվեց «գրավյալ տարածքների» հարցը: Վարդան Օսկանյանի բնորոշմամբ, այս քայլն ադրբեջանական դիվանագիտության սխալն էր. «Ադրբեջանը պետք չէ հույս ունենա, որ, մի կողմից, նա կարող է շարունակել Պրահայի բանակցությունները, իսկ մյուս կողմից՝ ամբողջական փաթեթից վերցնել որոշ էլեմենտներ եւ փորձել լուծում տալ ղարաբաղյան հարցին այլ այյաններում: Կամ մենք աշխատում ենք Մինսկի խմբի շրջանակում, կամ էլ Ադրբեջանը տանում է այդ հարցը այլ միջազգային ատյաններ, եւ այս դեպքում նա պետք է գործ ունենա Լեռնային Ղարաբաղի իշխանությունների հետ»:

Նախարարը բարձր գնահատեց Պրահայում տեղի ունեցած բանակցությունները երկու երկրների արտաքին գործերի նախարարների միջեւ: Ըստ նրա, առկա են լուրջ տեղաշարժեր, եւ կարելի է արդեն արձանագրել, որ բանակցությունները մտել են երկրորդ փուլ: Նա նշեց, որ Ադրբեջանը նույնպես հայտարարել է, որ սպասում է Հայաստանի պատասխանին Պրահայի բանակցությունների երկրորդ փուլը սկսելու վերաբերյալ, եւ «Հայաստանը տվել է իր դրական պատասխանը Պրահայի բանակցությունների երկրորդ փուլը սկսելու մասին»: Ըստ նրա, Պրահայի բանակցությունների երկրորդ փուլը կարող է լուրջ հեռանկարներ բացել ղարաբաղյան հարցի խաղաղ կարգավորման մեջ զգալի առաջընթաց արձանագրելու «եւ վերջիվերջո հարցի լուծմանը հասնելու» համար:

«Արաֆաթի կյանքն այլեւս Ասծո ձեռքում է»

Երեկ գիշեր, Փարիզի «Սոֆիթել» հյուրանոցում մամլո ասուլիս տվեց Պաղեստինի արտգործնախարար Նաբիլ Շաաթը, որ Ֆրանսիայում էր գտնվում ինքնավարության վարչապետ Ահմեդ Կուրեյիի գլխավորած պատվիրակության կազմում, որի առաքելությունն էր տեղում ծանոթանալ ինքնավարության նախագահ Յասեր Արաֆաթի առողջական իրական վիճակին: Շաաթը հայտարարեց, որ Արաֆաթը նախորդ գիշերվանից գտնվում է ավելի խորը կոմայի վիճակում: Նա հերքեց շրջանառվող լուրերն այն մասին, թե Արաֆաթը խաղաղ ունի կամ նրան թունավորել են: Նա հերքեց նաեւ պաղեստինցի առաջնորդին յութանազիայի (բժիշկների օգնությամբ մահ) ենթարկելու մասին տարբեր ենթադրությունները եւ ավելացրեց. «Նախագահի կյանքն այսուհետեւ բացառապես կախված է Ասծո կամքից, քանզի ֆրանսիացի բժիշկներն ամեն հնարավորն արդեն արել են»: Խոսելով պաղեստինյան ինքնավարությունում տիրող վիճակի մասին Նաբիլ Շաաթն ասաց, որ կառավարությունը շարունակում է կանոնավոր աշխատել, պետական մյուս ինստիտուտները՝ նույնպես: Ինչ վերաբերում է նախագահական պաշտոնի հետագա շարունակականությանը, նա ասաց, որ Արաֆաթի մահանալու դեպքում հաջորդականությունը կարգահովվի ըստ ինքնավարության սահմանադրության, այսինքն՝ նրան ժամանակավորապես կփոխարինի խորհրդարանի նախագահը, որը 60 օրվա ընթացքում կկազմակերպի նախագահական ընտրություններ:

Մինչ ասուլիսը պաղեստինյան պատվիրակությունը եղել էր Կլամարի հոսպիտալում, որտեղ գտնվում է Արաֆաթը, խորհրդակցել բժիշկների հետ: Պատվիրակությունից միայն վարչապետ Ահմեդ Կուրեյիին էր առիթ տրվել անձամբ մտնելու Արաֆաթի հիվանդասենյակ:

Վերջին պահին միջազգային լրատվական գործակալությունները տեղեկացրին, որ Արաֆաթի մոտ նկատվել է ուղեղի արյունազեղում եւ թե Պաղեստինի մահմեդականների հոգեւոր պետը՝ մյուֆթին, ուղեւորվել է Փարիզ՝ աղոթք ասելու Արաֆաթի սնարին:

Ամերիկյան զրահատեխնիկան մտավ Ֆալուջայի կենտրոն

Ամերիկյան զորքերն իրաքյան բանակի հետ 2-րդ օրը շարունակում են համատեղ խոշոր հարձակումը Ֆալուջայում ամրացած աղստամբների դեմ: Իրաքում ամերիկյան ուժերի հրամանատար, գեներալ Ջորջ Քեյսիի խոսքերով, գործողությանը մասնակցում են 10 հազար ամերիկացի եւ 2000 իրաքցի զինվորներ, որոնց դիմակայում են մոտ 3000 աղստամբներ:

Բրիտանական «Սայնյուզ» հեռուստաընկերության տվյալներով, ամերիկյան զրահատեխնիկան երեկ ճեղքել է իրաքցիների պաշտպանությունը: Կոալիցիոն ուժերը խորացել են քաղաքում: Կատաղի մարտեր են մղվում Ջուլան թաղամասում, որն աղստամբների հենակետերից մեկն է: Քաղաքի այսպես կոչված «մաքրման» գործողության շաբի ներկայացուցիչը հայտարարել է, որ սկզբում ամերիկացիները փորձում են ճեղքել աղստամբների պաշտպանական գծերը, իսկ հետո իրաքցի զինծառայողները «մաքրում են» քաղաքի թաղամասերը:

CBS հեռուստաընկերությունը հաղորդում է, որ ցամաքային գործողությանը նախորդել են ռմբահարվածներն ու հրետակոծությունը, որոնցից զոհվել է 42 աղստամբ: Քաղաքի պաշտպանները սարքում են բարիկադներ եւ մահապարտների գրոհներ կազմակերպում ամերիկացիների հարձակումը կասեցնելու համար:

Ամերիկացի հրամանատարների խոսքերով, Ֆալուջայի ճակատամարտն «ամերիկյան բանակի ամենաահավոր մարտն է Վիետնամի պատերազմից ի վեր»: Երեկ ամերիկացիները տիրել են քաղաքի երկաթուղային կայարանին: Ավելի վաղ նրանց ձեռքն էր անցել Ֆալուջայի գլխավոր հիվանդանոցը:

Տեղում մարտերին հետեւող միջազգային լրագրողներից ոմանք գիշերը հայտնեցին, որ աղստամբների դիմադրությունն ընդհատ է եւ կազմակերպված բնույթ չի կրում: Երեկ Ֆրանսպրեսը հայտնեց, որ Բաղդադից 100 կմ դեպի արեւմուտք գտնվող Ռամադի քաղաքում աղստամբները միօրյա մարտերից հետո քաղաքի կենտրոնից դուրս են մղել ամերիկյան ուժերին:

Պ. Ք.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Ցեղասպանության ճանաչման հարցով Հայաստանի քաղաքականության մեջ փոփոխություն չկա

«2005 թ. համար Հայաստանի պետական բյուջեի նախագծում արտաքին քաղաքականության բնագավառում բացակայում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը: Այդ կապակցությամբ լրատվամիջոցները, մասնավորապես թուրքական եւ ադրբեջանական մամուլը տարատեսակ մեկնաբանություններ են տարածում: Ինչ բացատրություն կտայիք դրան»: Արմենպրեսն գործակալության այս հարցին պատասխանում է ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղար Համլետ Գասպարյանը. «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցով Հայաստանի քաղաքականության մեջ փոփոխություն չկա: Ցեղասպանության ճանաչման հարցը առաջվա պես շարունակում է մնալ Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում, եւ այն չի վճռվում բյուջեի կամ, ավելի ճիշտ, բյուջեի նախագծին ուղեկցող կառավարության ուղերձի առանձին տողով:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը միայն Հայաստանին եւ հայերին չի վերաբերում, դա համամարդկային հարց է եւ չի կարող տեղավորվել կամ տեղայնացվել որեւէ բյուջեի կամ նման այլ ֆինանսական հաշվարկների մեջ»:

ԸՆԹԱՑԻԿ

Մտահոգությունները դարձյալ միակողմանի հասցե ունեն

Ադրբեջանում հայ գերիներ են պահվում ադրբեջանական անուններով

ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը հանդես է եկել դիմում-հայտարարությամբ՝ ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությանը եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի նախագահին:

Դիմումի մեջ հիշյալ կազմակերպության վարչության խորհուրդը, բարձր գնահատելով Մինսկի խմբի գործունեությունը ղարաբաղ-ադրբեջանական հակամարտության կարգավորման գործում, միաժամանակ մտահոգություն է հայտնում պատերազմական գործողությունների ժամանակ անհայտ կորած անձանց, գերի ընկած զինծառայողների, պատանդ վերցված խաղաղաբնակների ճակատագրի որոշման, ինչպես նաեւ զոհվածների, մահացածների թաղման անհայտ վայրերի հայտնաբերման ու հետազոտման, աճյունների իսկության ճշման եւ վերահուղարկավորման հիմնահարցերը դեռեւս սպառիչ լուծում չստանալու կապակցությամբ:

Այս առնչությամբ խորհուրդը նաեւ ափսոսանք է հայտնում, որ ի տարբերություն Լեռնային Ղարաբաղի, որն իր բոլոր պարտավորությունները կատարում է պատշաճ կերպով, Ադրբեջանի իշխանությունները ցուցաբերելով հակառակ մոտեցում՝ շարունակում են խաղաղական շահարկումները հարցի շուրջ՝ հրաժարվելով ղարաբաղյան կողմի հետ որեւէ համագործակցություն ծավալելուց:

ԱԿԱՀՄ վարչության խորհուրդը նշում է, որ հավաստի աղբյուրներից ստացված տվյալներ ունի ներկայումս Ադրբեջանի արգելափակման վայրերում, մասնավորապես զորամասերում, պահվող հայ ռազմագերիների ու խաղաղաբնակների անձանց պատանդառության մասին, որոնց թվում կան նաեւ ղարաբաղցիներ: Ըստ նույն աղբյուրների, հայազգի ռազմագերիներին ու պատանդներին այդտեղ պահում են ադրբեջանական ծագում ունեցող անուն-ազգանունների տակ՝ սպառնալով չբացահայտել իրենց ինքնությունը տեսչական առաքելությամբ միջազգային դիտորդների այցելությունների ժամանակ: Հայ գերիներն ու պատանդները, համաձայն հիշյալ դիմում-հայտարարության, պարբերաբար ենթարկվում են խոշտանգումների ու կտտանքների: Չդիմանալով այդ ամենին, նրանց մի մասը մահացել է եւ որեւէ թվային նշանի տակ թաղվել բանտային գերեզմանոցներում:

Նշելով այս տվյալների մասին, ԱԿԱՀՄ վարչության խորհուրդը կոչ է անում Մինսկի խմբի համանախագահներին եւ ԿԽՄԿ նախագահին՝ անհապաղ միջամտել Ադրբեջանի արգելափակման վայրերում դեռեւս ողջ մնացած հայազգի ռազմագերիներին ու պատանդներին ազատ արձակելու հարցում, միեւնույն ժամանակ հիշեցնելով, որ Ադրբեջանի Հանրապետությունը եւս ստորագրել է Ժնեւյան համաձայնագրերն ու դրանց լրացուցիչ արձանագրությունները եւ պարտավոր է կատարել դրանց պահանջները: Նույն տեսանկյունից նաեւ նշվում է, որ ղարաբաղյան կողմը պատրաստակամ է մարդասիրական հարցի շուրջ ցանկացած գործընթաց սկսելու, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող անհայտ թաղման վայրերի հայտնաբերման, հետազոտման, աճյունների իսկության պարզման եւ վերահուղարկավորման գործում:

Ադրբեջանի ընդառաջող քայլը կնպաստի հակամարտության կարգավորման գործընթացին, համոզմունք է հայտնում ԱԿԱՀՄ վարչության խորհուրդը:

ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը առաջին անգամ չէ հրապարակավ հանդես գալիս նման մտահոգություններով, սակայն դրանք միշտ էլ Ադրբեջանի կողմից բացարձակ անուշադրության են մատնվել:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ,
Ստեփանակերտ

Նախկին կոմունիստ Հովհաննիսյանի անՆԱՏՕմիան

Մի քանի օր առաջ **«Ազգ»** օրաթերթում, իսկ երեկ նաեւ «Առավոտում» «Ազատական առաջադիմական» կուսակցության նախագահ Հովհաննես Հովհաննիսյանն արել է հայտարարություններ, որոնց անհրաժեշտ է անդրադառնալ գոնե այն պատճառով, որ խեղաթյուրվում են փաստերը: Խնդիրը հայացքների եւ կողմնորոշումների մասին չէ. յուրաքանչյուր քաղաքական գործիչ կարող է տարբեր արժեքներ դավանել: Օրինակ, նույն Հովհաննես Հովհաննիսյանը, որը ժամանակին եղել է հավատացյալ կոմունիստ, նույնքան հավատացյալ ռամկավար (լիբերալ-դեմոկրատ), ապա, բնականաբար, հիշական (քանի որ ՀՀՇ-ն էր իշխող կուսակցությունը), ՀՀՇ-ից հետո մի քանի տարի համագործակցում էր գործող իշխանությունների հետ: Այսօր նա «Ազատական առաջադիմական» կուսակցության նախագահն է, քանի որ Քոչարյանի վարչախմբում չգտավ իր տեղը:

Մեկնաբանելով ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տարածաշրջանային ացը, Հովհաննիսյանը նշում է, որ «պրն Սխեֆերը Վրաստանում եւ Ադրբեջանում գիշերեց՝ այդ երկրների քաղաքական ղեկավարության հետ ճնշակումներին ավելի շատ ժամանակ տրամադրելով, իսկ Հայաստան եկավ մեկ ժամ ուշացումով, կես ժամ էլ շուտ մեկնեց: Այսինքն՝ դիվանագիտության լեզվով ասած՝ դա վերաբերմունք էր Հայաստանի նկատմամբ»:

Դիվանագիտության լեզուն թողնենք մի կողմ եւ փաստենք, որ Սխեֆերը Վրաստանում չի գիշերել: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի նկատմամբ ՆԱՏՕ-ի վերաբերմունքին, ապա ակնհայտ է, որ երբեւիցե Հայաստան-ՆԱՏՕ հարաբերություններն այսքան բարձր մակարդակի վրա չեն եղել: Սխեֆերն այցի նախօրեին տված հարցազրույցում, ապա եւ Երեւանում բազմիցս կրկնեց, որ Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները դինամիկ զարգանում են: Դրա ապացույցը, թերեւս, նաեւ այն է, որ Հայաստանն ադրեն ՆԱՏՕ-ում ունի դեսպան:

Վերջին շրջանում Հովհաննիսյանն անընդհատ կրկնում է, որ Հայաստանը պետք է դուրս գա Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից (ՀԱՊԿ): Լա՛վ, եթե նա այդքան եվրոպական արժեքների կրողն է, ապա նախկինում, երբ Աժ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահն էր, ինչո՞ւ խորհրդարանում չէր դնում ՀԱՊԿ-ից Հայաստանի դուրս գալու խնդիրը:

Որպես առաջադեմ գեոպոլիտիկ Հովհաննիսյանն անդրադարձել է նաեւ ԱՄՆ նախագահական ընտրություններին եւ կրկին թյուրիմացության մեջ գցել ընթերցողներին: Հիշեցնենք, որ ամերիկահայերը բոլորը չէ, որ քվեարկել են Քերիի օգտին: Զարմանալի է Հովհաննիսյանի տրամաբանությունը, երբ նա ասում է. «Այս անգամ մեր իշխանությունների (Հայաստանի-խմբ.) անհեռատեսության շնորհիվ, մեղմ ասած, անհարմար վիճակում հայտնվեցին բոլորը»: Ուրեմն, Հայաստանի իշխանությունները պիտի ազդե՞ն ամերիկահայ կազմակերպությունների վրա: Լուրջ մարդիկ հակառակն են ասում, որ ամերիկահայ կազմակերպությունները լուրջ ազդեցություն ունեն Հայաստանի վրա:

«Այդպիսով Հայաստանն, իմ համոզմամբ, կորցրեց Բուշի ադմինիստրացիայի հետ երկխոսության հնարավորությունը», պնդում է Հովհաննիսյանը:

Մեր կողմից նկատենք, որ մի քանի օր առաջ Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետն ԱՄՆ-ում արժանացավ (տես՝ կողքի սյունակը) «Պատվո լեգեոն» մեդալի հայ-ամերիկյան պատմական գերատեսչությունների միջեւ կայուն եւ կառուցողական կապերի հաստատման, ահաբեկչության դեմ պայքարի ակտիվ մասնակցության եւ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին ակտիվ մասնակցության համար:

ԹԱԹՈՒԼ ՀԱՄԲԱՐՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ԶՈՒ գլխավոր շտաբի պետն ԱՄՆ-ում

Վաշինգտոնում Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Միհայել Հարությունյանը հանդիպել է ԱՄՆ զինված ուժերի միացյալ շտաբների հանձնաժողովի նախագահ գեներալ Ռիչարդ Մայերսի հետ, հաղորդում է ՀՀ ՊՆ տեղեկատվության եւ հարազչության վարչությունը: Գեներալ-գնդապետ Միհայել Հարությունյանը հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 5-ը գեներալ Ռիչարդ Մայերսի հրավերով այցելել է Մ. Նահանգներ:

Այցի շրջանակներում հայկական պատվիրակությունը հանդիպել է Նորֆոլկում (Ֆլորիդա) գտնվող ՆԱՏՕ-ի վերափոխման դաշնակցային հրամանատարության, ինչպես նաեւ Տամպայում (Ֆլորիդա) տեղակայված ԱՄՆ միացյալ ուժերի հրամանատարության, ԱՄՆ կենտրոնական հրամանատարության հետ:

Հանդիպումների ընթացքում կողմերը քննարկել են հայ-ամերիկյան ռազմական համագործակցության, խաղաղապահության, ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում Հայաստանի մասնակցությանն առնչվող խնդիրներ: Գեներալ-գնդապետ Հարությունյանն այցելել է նաեւ Արլինգտոնի ազգային գերեզմանատուն եւ Հայաստանի զինված ուժերի անունից ծաղկեպսակ դրել անհայտ զինվորի հուշարձանին:

Հայ-ամերիկյան պատմական գերատեսչությունների միջեւ կայուն եւ կառուցողական կապերի հաստատման, ահաբեկչության դեմ պայքարի ակտիվ մասնակցության եւ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին ակտիվ մասնակցության համար Միհայել Հարությունյանն արժանացել է ԱՄՆ զինվորական բարձր պարգեւի՝ «Պատվո լեգեոն» մեդալի:

Հավելենք, որ Հայաստանը պատրաստակամություն է հայտնել Իրաք ուղարկելու 50 հոգանոց բժիշկների, սակրավորների եւ վարորդների անձնակազմ, այսպիսով մասնակցելով Իրաքում ԱՄՆ-ի հակահաբեկչական գործողություններին: Պիտի ենթադրել, որ Հայաստանի ԶՈՒ գլխավոր շտաբի պետին ԱՄՆ-ում բարձր մակարդակով ընդունելությունը եւ «Պատվո լեգեոնի» մեդալն այն գինն է, որը բաջալերում է Իրաք 50 հոգանոց հայկական անձնակազմ ուղարկելու խոստման կատարումը:

Ինտերնետ հեռախոսակապ մատակարարող ընկերությունները շարունակելու են պայքարը

Ինտերնետ հեռախոսակապ մատակարարող ընկերությունները երեկ իրենց հերթական ասուլիսն էին հրավիրել: Կազմկոմիտեի անդամներ Արսյոմ Խաչատրյանը եւ Մուշեղ Միլիտոնյանը իրենց հայտարարության մեջ նշեցին, որ «Արմենտելի» «մենաշնորհային իրավունքներն ավելի են ընդլայնվել», ինչը հարվածում է փոքր եւ միջին բիզնեսին եւ վատթարացնում ժողովրդի սոցիալական վիճակը: «Արմենտելի» վերաբերյալ կառավարության որոշումը որակելով որպես հակասահմանադրական եւ հակաժողովրդական, նրանք հայտարարեցին, որ պայքարելու են դրա դեմ: Նամակներ են հղվել ՀՀ նախագահին, ԱԺ նախագահին, վարչապետին, ՍԴ նախագահին, միջազգային կազմակերպություններին, անցկացվում է ստորագրահավաք, նախատեսվում է հանրահավաք:

Ներկայացնելով իրենց մոտեցումը կառավարության որոշման վերաբերյալ, Արսյոմ Խաչատրյանը նշեց, որ մինչ Լոնդոնի արբիտրաժային դատարանում դատավարության սկսվելը, կառավարության ներկայացուցիչները եւ մասնավորապես արդարադատության նախարարը պնդում էին, որ մեր հնարավորությունները մեծ են: Բացի այդ, «Արմենտելի» հետ վեճերի ժամանակ կառավարությունը պնդում էր, որ ինտերնետ հեռախոսակապի ընկերությունները չեն խախտում նրան տրված լիցենզիան: Սակայն Լոնդոնի դատական գործընթացներից հետո մոտեցումը փոխվեց, ինչն էլ, ըստ Արսյոմ Խաչատրյանի, պատճառ դարձավ ինտերնետ հեռախոսակապի վերաբերյալ հիշյալ որոշման:

Այնուհետեւ ելույթ ունեցողն իրականությանը չհամապատասխանող համարեց արդարադատության նախարարի այն հայտարարությունը, թե ինտերնետ հեռախոսակապի ընկերությունները լիցենզիա են ստացել միայն տվյալների փոխանակման համար: Նրա հավաստմամբ, իրենք ստացել են նաեւ ձայնի փոխանցման իրավունք: Եվ քանի որ խախտվել են իրենց իրավունքները, ապա փոխհատուցման եւ լիցենզիայով իրենց վերապահված իրավունքների վերականգնման նպատակով IP ընկերությունները կդիմեն դատական այցելություններին, որտեղ հաջողության չհասնելու դեպքում իրենց շահերը կպաշտպանեն Եվրոպական դատարանում:

Մուշեղ Միլիտոնյանը հայտնեց, որ իրենց ստորագրահավաքին արդեն հազարավոր մարդիկ են մասնակցել: Կոալիցիայի անդամ քաղաքական երեք ուժերից երկուսի ներկայացուցիչները ոչ պաշտոնական զրույցների ժամանակ պաշտպանել են իրենց դիրքորոշումը, բայց համապատասխան հայտարարությամբ հանդես չեն եկել: Մուշեղ Միլիտոնյանը նաեւ տեղեկացրեց, որ արդարադատության նախարարն իրենց չի ընդունել, ընդունել է նրա խորհրդականը եւ ասել, որ ինտերնետ հեռախոսակապի ծառայություններ այդ ընկերությունները չեն կարող մատակարարել:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 90 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լուսաբանների սենյակ / հեռ. 581841
Գովազդի ծառայություն / հեռ. 582483
Տարբերակ լրահավաք ծառայություն / հեռ. 529353
Գովազդային շարասենյակ
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Շիրակը շարունակում է հետաքրքրել հայագետներին

Գյումրու 6-րդ հանրապետական գիտաժողովից

Վերջին մեկ տասնամյակի ընթացքում Գյումրին, Շիրակը դարձել են հայագիտության զարգացման երկրորդ կարևոր կենտրոնը հանրապետությունում: Բացի պատմագավառի բազմադարյա հարուստ նյութական ու հոգևոր մշակույթի ներկայացրած անանց հետաքրքրությունից, դա նաև պայմանավորված է տարիների ընթացքում տեղում բավական լուրջ մասնագիտական ներուժի ձևավորմամբ ու հետազոտությունների մակարդակով, շիրակագիտության խթանման ուղղությամբ երկրի առաջատար հայագիտական օջախների հետ հաստատված օրինակելի համագործակցությամբ: Դրանում կարևոր դեր են կատարում 1994 թվականից ի վեր Գյումրիում երկու տարին մեկ գումարվող՝ Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հանրապետական եռօրյա գիտաժողովները, որտեղ ամփոփվում են այդ ժառանգության բազմակողմ ուսումնասիրությունների արդյունքները, ուրվագծվում ոլորտի հետագա խնդիրներն ու հետաքրքրությունները: Որոշ ժամանակից ի վեր այդ գիտական նստաշրջանների կազմակերպիչը ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնն է, որը 1997 թվականից ստեղծվել եւ գործում էր որպես ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի մասնաճյուղ, իսկ այս տարվա սկզբից սացել է ինքնուրույն միավորի կարգավիճակ:

Օրերս տեղի ունեցած հերթական՝ 6-րդ գիտաժողովում, որի բացման մասին **«Ազգը»** տեղեկացրել է, ոլորտի նորագույն ուսումնասիրությունների վերաբերյալ գիտական զեկուցումներով ներկայացված էին ՀԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության, Արվեստի, Լեզվի ինստիտուտները եւ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, Երեւանի պետական համալսարանը, Գյումրու մանկավարժական ինստիտուտը եւ արվեստի բուհերի տեղի մասնաճյուղերը, Մատենադարանը, Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտը, Շիրակի երկրագիտական, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց թանգարանները: Առաջին լիագումար նիստից հետո գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին եւ ընթացան երկու մասնաճյուղերում:

Շիրակի երկրագիտական թանգարանի հնագիտական արշավախումբն այս տարի պեղումներ է սկսել մարզի Ստոցքի տարածաշրջանում ավելի վաղ հայտնաբերված՝ Սեպասարի վաղ բրոնզի դարի բնակավայրում: Այս մասին գիտաժողովի հնագիտության, պատմության, վիմագրության եւ մարդաբանության մասնաճյուղում թանգարանի գիտաշխատող Լարիսա Եգանյանի ներկայացրած զեկուցման տվյալներով՝ հնավայրի տարածքից հավաքված խեցեղենի բեկորները եւ մի հատվածով պահպանված ուղղանկյուն կացարանը վերաբերում են մ. թ. ա. III հազարամյակին, իսկ հուշարձանի ամբողջ տարածքն ընդհանուր առմամբ ընդգրկում է վաղ բրոնզի եւ ուշ միջնադարի ժամանակահատվածները: Լ. Եգանյանի եւ Համազասպ Խաչատրյանի մեկ այլ ուսումնասիրությունը վերաբերում էր անտիկ Շիրակի խոփերի խնդրին, որոնք, հեղինակների դիտարկմամբ, երկաթի փոխարեն հավանաբար եղել են այլ նյութից, օրինակ՝ քարից: Որպես այդպիսիք ներկայացվեցին Բենիամինի անտիկ բնակավայրի պեղումներից գտնված երկու քարե իրեր:

Հետաքրքրական նյութ պարունակող գիտական վերլուծություններ էին բրոնզի դարի մի հորինվածքի պարզաբանման շուրջ Լեւոն Աբրահամյանի, Արեւի աստծու քաղաքի եւ նրա մակդիրների, Վանա աստվածությունների երկրորդ (Խուտուինի-Ավի) զույգի մասին Սարգիս Պետրոսյանի, Երվանդյան մայրաքաղաքի հիմնարկեքի (Երվանդակերտը՝ որպես երկրի աշխարհիկ, Դարսխանակերտը՝ հոգևոր կենտրոն) պաշտամունքային հայեցակարգի մասին Արծրունի Սահակյանի զեկուցումները, Ֆրինա Բաբայանի՝ Անիի ջնարակած թասերի վրա պատկերված կերպարների նոր մեկնաբանությունը: Արմեն Պետրոսյանի «Կումայրի» տեղանվան շուրջ» ուսումնասիրության մեջ քաղաքի տեղանունը կապվում էր խուռիական պանթեոնից հայտնի Կումարբի դիցանվան, Արեւելյան Հայաստանում այդ խմբի առասպելների հնագույն տեղայնացումներից մեկի հետ: Նույն մասնաճյուղում ներկայացված այլ ուշագրավ նյութերի թվում էր Ինգա Ավագյանի հաղորդումը Սոսե Մայրիկի մի նորահայտ նամակի մասին, որը «Կումայրի» արգելոց-թանգարանի կողմից ձեռք է բերվել Մեծ եղեռնի ականատեսների թողած գրավոր եւ իրեղեն աղբյուրների որոնողական գիտարշավի ընթացքում:

Բավական հարուստ նյութ էր ներկայացված ազգաբանության, էթնո-սոցիոլոգիական հետազոտությունների, բարբառագիտության, բանագիտության, արվեստաբանության եւ երաժշտագիտության մասնաճյուղում: Նշենք, օրինակ, Շիրակի բնակչության ծիսական, տոնական վարքագծի, տնտեսական կենցաղի, հետաղեցյան հոգեկարգավորման տարբեր իրողությունների վերաբերյալ Ժենյա Խաչատրյանի, Սամվել Մկրտչյանի, Կարլ Սեղբոսյանի, Արտաշես Բոյաջյանի եւ այլոց ուսումնասիրությունները, լեզվաբաններ Խաչիկ Բադիկյանի, Ցեմմա Բառնասյանի, Հայկանուշ Հովհաննիսյանի եւ Հայկանուշ Մեսրոպյանի բարբառագիտական դիտարկումները: Անկախությունից հետո Հայաստանի Հանրապետության բնակչության բնական աճի հայտնի միտումների, ըստ 2001 թ. մարդահամարի արդյունքների, Շիրակի մարզի բնակչության վիճակագրության վերլուծություն էին Արտակ Մարկոսյանի, Համլետ Սարգսյանի զեկուցումները: Բերված թվերը մասնավորապես ցույց են տալիս, որ 20-րդ դարի վերջին տասնամյակում հանրապետությունում բնական աճի տեմպերը նախորդ տասնամյակի համեմատությամբ կրճատվել են 1,7 անգամ, իսկ նվազման միտումը շարունակվում է: Գրեթե 3 անգամ նվազել է ամուսնությունների քանակը: Հայկական ընտանիքն այսօր «փոքրացել է»՝ 80-ական թթ. 4-5-ի փոխարեն միջին հաշվով կազմելով 3 մարդ: Սակավ է այն ընտանիքների թիվը, որտեղ երեխաների քանակն անցնում է երկուսից: 1000 բնակչի հաշվով բնական աճի 1998-2002 թթ. տարեկան միջին գործակիցը եթե հանրապետությունում կազմել է 2,9, ապա Շիրակի մարզում՝ 1,6 մարդ: Մարզի առկա բնակչության թվում մեծ տեսակարար կշիռ ունեն 10-19 եւ 60-ից ավելի տարիք ունեցողները: Գիտական նստաշրջանի այս մասնաճյուղում մի առանձին խումբ էին կազմում նաեւ երաժշտագիտական ու կերպարվեստի թեմաներով զեկուցումները:

Ինչպես նշում է Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Սերգո Հայրապետյանը, այս գիտաժողովների կազմակերպման գործում կարեւոր դեր ունի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության, Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդարանի, Շիրակի մարզպետարանի, Հայ կաթողիկե եկեղեցու, նաեւ անհատ բարեգործների բարոյական ու ֆինանսական աջակցությունը:

ԳԵՂԱՄ ՄԱՐՏՈՅԵՆ

Օծվեցին Սուրբ Երրորդություն եկեղեցու խաչերը

Ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ երեկ օծվեցին Մալաթիայի Սուրբ Երրորդություն եկեղեցու խաչերը: Զանգակատնից, մոմավառության երկու սրահներից, աստյանից, գավթից, խորանից բաղկացած Սուրբ Երրորդություն եկեղեցու խաչերի օծումն սկսվեց Տերունական աղոթքով: Եկեղեցու բարերարն է հայտնի բարեգործ տկն Լուիզ-Սիմոն Մանուկյանը, հեղինակ-ճարտարապետն է Տիարքաղդիք Արզումանյանը, իսկ շինարարն է Ալբերտ Եղիկյանը, որոնց հաստատեցին էլ հնչեցին ընտրհակալության եւ երախտիքի խոսքեր: Գարեգին Երկրորդ կաթողիկոսն ասաց. «Այսօր Աստծո ողորմած կամքով կրկին համախմբված ենք դեպի երկինք հառնած եկեղեցու մոտ եւ բարձր հոգեւոր դասի հետ կատարում ենք սուրբ խաչերի օծումը, որոնք պետք է բարձրության վրա զետեղվեն որպես հաղթություն եւ փրկություն, եւ մենք խաչի օրհնությամբ ու զորությամբ պետք է լծվենք մեր երկրի եւ եկեղեցու սուրբ գործին»: Ամենայն հայոց հայրապետը նշեց, որ եկեղեցին ժողովրդի առաջ իր դռները կբացի առաջիկա մայիսին եւ ավելացրեց, որ արդեն իսկ նշանակված է եկեղեցական՝ իր աշխույժ հովվական գործունեությամբ աչքի ընկած տեր Գրիգորը:

Առիթ եղավ անդրադառնալու նաեւ այն հարցին, որ շատ քաղաքներում եւ շրջաններում չկան եկեղեցիներ: Հայրապետը հավաստիացրեց, որ քայլեր են ձեռնարկվում նոր եկեղեցիներ կառուցելու եւ խոնարհված եկեղեցիները վերականգնելու:

ԳՈՌՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԹՈՒՐՔԵՐԸ ՈՉԵՎՈՐՎԵԼ ԵՆ

Թուրքական մամուլը շարունակում է անհիմն հետեւությունները ցեղասպանության առնչությամբ

Հավաստիության պատրանք ստեղծելու համար շահարկելով ափյուռխահայ գործիչների անունները

«Ազգը» նախորդ համարում, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության 2005 թ. պետական բյուջեի նախագծի թուրքական արձագանքներին, գրել էր. «Թեեւ Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում ոչ թե Հայոց ցեղասպանության փաստի պարտադրումն է Թուրքիային, այլ դրա միջազգային ճանաչումը եւ հարցն օրակարգից դուրս բերելու հետեւությունները որեւէ հիմք չունեն, այնուամենայնիվ, դրանք խիստ ոգեւորել են թուրքական քերթերին, որոնց օրինակին հետեւում են ադրբեջանականները»:

Որո՞նք են այդ հետեւությունները: Այն, որ Հայաստանի կառավարությունն, ի տարբերություն նախորդ տարիների, 2005 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման բյուջետային հատկացում չի արել, պետբյուջեի նախագծում ցեղասպանության մասին չի հիշատակում կամ էլ այնտեղ իբր նշվում է, թե «օսմանյան շրջանում իրագործված Հայոց ցեղասպանության ճանաչման պարտադրումը Թուրքիային ՀՀ կառավարության առաջնահերթություններից չէ, առաջնայինը թուրքական պետության հետ հարաբերությունների կարգավորումն է»:

Որքան էլ հետեւություններն անհիմն լինեն, նաեւ հակասական, միեւնույն է, թուրքական քերթերը շարունակում են ադեկվատորեն միջազգային հանրությանը, թե Հայաստանը հանուն Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման, երկրի արտաքին քաղաքականության օրակարգից դուրս է բերում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Նրանք միաժամանակ հարցի առնչությամբ համապատասխան ազդանշաններ են հաղորդում հայկական իշխանություններին:

Ըստ երեւույթին, ցեղասպանության հարցի առնչությամբ միջազգային հանրությանն ադեկվատորեն, ինչպես նաեւ Հայաստանին ազդանշաններ հաղորդելը թուրքական պետության շահագրգռություններն ոլորտում են, որ համանուն քերթերն անհիմն հետեւությունների հավաստիության պատրանք ստեղծելու նկրտումով շահարկում են ափյուռխահայ գործիչների անունները:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ «Հայաստանի հետ դեպի լավը...» խորագրով «Աֆշամի» նոյեմբերի 9-ի համարում Գյուլեր Ջոմուրջու ստորագրությամբ հրապարակված հոդվածին: Հոդվածագիրը, ուսումնասիրելով Ֆրանսիայի առափնյա քաղաքներից Նիցցա, տեղեկանում է, որ նոյեմբերի 6-7-ը Կաննում Իսրայելի հրեական համալսարանը «Իսլամն ու Արեւմուտքը» թեմայով միջազգային գիտաժողով է կազմակերպում: Գիտաժողովին պատասխանվում է զեկուցողի կարգավիճակով մասնակցել նաեւ Թուրքիայի նախկին պետնախարար Քեմալ Դերվիշը: «Ովքեր ասես եկել էին, գրում է նա, սկսած Մոսադի նախկին ղեկավարից, վերջացրած Վաշինգտոնի ամենագետ Ռիչարդ Պեռլով»:

Վերջին պահին Դերվիշը հրաժարվում է մասնակցել գիտաժողովին: Սակայն հոդվածագիրն այնտեղ հանդիպում է միջոցառման մասնակիցներից Ալեքսի Գյովջյանին եւ Սամսոն Օզարարային: Մինչ հանդիպումը հոդվածագիրը հիշատակում է «Հայաստանի հետ բարդ հարաբերություններում կատարված պատմական քայլի» մասին, ապա եւ գրում. «Մեղմ քաղաքականության կողմնակից Տեր-Պետրոսյանից հետո Հայաստանում իշխանության եկած Ռոբերտ Քոչարյանը, որ սերտ հարաբերությունների մեջ է ազգայնական Դաշնակցություն կուսակցության, աշխարհի հայկական կազմակերպությունների եւ լոբբիների հետ, նախորդ օրը Թուրքիայի ուղղությամբ դրական քայլ կատարեց: Հայաստանի կառավարության 2005 թ. պետբյուջեի նախագծով, որը խորհրդարան է ներկայացվել, ի տարբերություն նախորդ տարիների, ցեղասպանության ճանաչման նպատակով հատկացում չի արվում: Դրանից մի քանի շաբաթ առաջ հայաստանյան իշխանությունները հայտարարել էին, որ ցեղասպանության ճանաչումը նախապայման չէ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման համար»:

Ինչ վերաբերում է հանդիպմանը, ճանի որ Գյուլը Ջոմուրջուն հետաքրքրական տեղեկություններ է հայտնում Գյովջյանի եւ Օզարարայի մասին, ուստի հոդվածի այս հատվածը ներկայացնում ենք ամբողջությամբ. «Մինչ Հայաստանի կառավարությունը 2005 թ. պետբյուջեի նախագծով հարկ չէր համարում գեթ մեկ բառով տեղ հատկացնել ցեղասպանության ճանաչման քարոզարշավին, աշխարհի հայկական լոբբիները, օրինակ, Ֆրանսիայում գործող, արմատական դիրքորոշում են որդեգրել, ավելի ուշ՝ որդեգրում էին:

Իմ զրուցակից Ալեքսի Գյովջյանը Ֆրանսիայում գործող հայկական լոբբիի առաջնորդն է (որն Ալեքսին, մեկ այլ անունով՝ Գեորգ Գյովջյանը, իրականում ծնունդով պոլսեցի է, մինչեւ 18 տարեկանը բնակվել է Ստամբուլում, եղել մեր քաղաքացին): Ֆրանսիայում ապրիլի 24-ի (հայտնի պնդումների) օրինականացումն ապահովողներին ինքն է գլխավորել: Չնայած դրան, մեր զույգի ընթացքում նա Երեւանի վերոհիշյալ մեղմ քաղաքականությանը համահունչ արտահայտություններ արեց:

Պրն Գյովջյանի ներկայությամբ զրուցեցինք նաեւ Սամսոն Օզարարայի հետ: Նա 90-ական թթ. Ազգայնական շարժում կուսակցության հանգուցյալ նախագահ Ալփարսլան Թյուրքեշի ղեկավարությամբ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ խնդիրների կարգավորմանը նպատակամղված հանդիպումներ էր ունենում եւ այդ ուղղությամբ քրտինք թափում Թյուրքեշի հետ: Պրն Սամսոնը երկար տարիներ Պետական պլանավորման կազմակերպությունում, ապա եւ մասնավոր սեկտորի «Սաբանջի գրուպում» ղեկավար պաշտոններ զբաղեցրած շրջանակներին քաջածանոթ անուն է: Օզարարան սրտանց պաշտպանում է «Ցեղասպանության պնդումները հաղթահարելու եւ առեւտրի ոլորտում երկու երկրների միջեւ համագործակցություն» հաստատելու Թյուրքեշի տեսակետը եւ ցանկություն է հայտնում, որ Թուրքիան դիվանագիտական հարաբերություններ սկսի Հայաստանի հետ: Հենց այդ պահին պրն Գյովջյանը նշում է, որ հանուն կառուցողական քաղաքականության միանում է Օզարարայի ցանկություններին, նույնիսկ պատրաստակամություն է հայտնում մասնակցելու այն միջոցառումներին, որոնք կկազմակերպվեն Թուրքիայի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների նախաձեռնությամբ:

Վերադարձին Անկարայում, ինչպես ինձ ասաց հարցի «գիտակը», սպասում ենք դրական ազդանշանների: Շատ բարի, սակայն, ինչո՞ւ ենք զլանում Թյուրքեշի երբեմնի նախաձեռնությունը ժամանակի պահանջներին համապատասխան նոր դերակատարումներով արդիականացնել: Գուցե ամեն ինչ դեկտեմբերի 17-ից հետո՞ է լինելու»:

Հ. ՅԱՔՈԲՅԱՆ

Մեդրսդարձ

Ստորումներ մի բրոշյուրի հրատարակման առիթով

Ընկերներից մեկը վերջերս մի բրոշյուր տվեց ինձ, որ կարդամ եւ իմ վերաբերմունքն արտահայտեմ: Բրոշյուրը վերնագրված էր «Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում»: Ըստ նշված տարեթվի, հրատարակված էր 2002 թ. օգոստոսին: Կազմողներն իրենց անվանել են «Համագործակցություն հանուն ժողովրդավարության միություն»: Բրոշյուրը բաղկացած է 30 էջից: Ունի պստղուն չափիկ, գունավոր նկարներով: Շապիկի առաջին երեսի նկարում պատկերված են կոնֆերանսի մասնակից չորս անձնավորություններ: Հետեւի երեսում 3 լուսանկարներ են. մեկը՝ կազմակերպության նախագահինը, մյուսը՝ բրոշյուրի անգլերեն թարգմանչինը եւ երրորդը՝ խմբագրինը: Առաջին էջը վերապահված է խմբագրականին, որի վերջին նախադասությունը, ինչպես նաեւ բրոշյուրի վերջին էջում զետեղված մի հայտարարություն, նշում է, որ «Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում» ծրագիրը, որեմն նաեւ բրոշյուրի հրատարակումը հովանավորել է «Հայաստանի բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամը»: Անտեղյակների համար նշեմ, որ այդ «Օժանդակության հիմնադրամը» հիմնվել է Սորոս հասատության միջոցներով:

Հակառակ ցանկությանս եւ գործադրած ջանքերիս, չկարողացա 16-րդ էջից այն կողմ կարդալ: Անգլերենն ամենագործածական (օտար) լեզուն չէ Հայաստանում, բայց ի սեր Աստծո, կարո՞ղ է մեկն ու մեկը բացատրել, թե ինչպես են մարդիկ համարձակվում գրել մի լեզվով, որից գլուխ չեն հանում կամ որի մասին գաղափար անգամ չունեն: Ավելին, ի՞նչ հույսեր են նրանք փայփայում, որ դրանով կկարողանան մարդկանց գրավել իրենց կողմը կամ ազդել նրանց վրա: Անգլերենով բրոշյուր հրատարակելու իմաստը ո՞րն է, երբ նպատակը հայ հասարակության շրջանում քարոզչություն տարածելն է: Նպատակը, ենթադրում եմ, Հայաստանում կրոնական հանդուրժողականությանը զարկ տալն է: Եվ եթե այդպես է, ի՞նչ նպատակ է հետապնդում անգլերենով հեռամուտ լինել այդ վեհ գաղափարի իրագործմանը, այն էլ այդքան կցկտուր, անձեռնհաս եւ անճոռնի ձեւով:

Առաջ քաշելով այս հարցերը, թույլ տվեք անդրադառնալ բրոշյուրի լեզվի որակին: Սկզբից ասեմ, որ լեզուն սոսկալի վատ է: Կարդացածս 16 էջերում չկա մի նախադասություն, որ ճիշտ լինի կամ իմաստ արտահայտի: Լեզվի ընտրությունն այդ գրքույկում ինձ համար մնում է հանելուկ:

Նյութն էլ լավ ուսումնասիրված չէ: Այնտեղ բացակայում են Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների եւ բնակվող փոքրամասնությունների վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններն ու փաստերը: Բրոշյուրը հավակնում է վերջին խոսքն ասել նախախորհրդային, խորհրդային եւ հետխորհրդային ժամանակաշրջաններում գոյություն ունեցող կրոնական կազմակերպությունների մասին, բայց ընթերցողն այդպես էլ հստակ չի պատկերացնում, թե, ի վերջո, քանի այդպիսի կազմակերպություններ իրականում գործում կամ գրանցված էին նշված ժամանակահատվածներում: Միեւնույն էջում մի տեղ նշված են Խորհրդային Միության փլուզումից առաջ գործող 9 այդպիսի կազմակերպությունների անունները, մեկ ուրիշ տեղ՝ ավելի ներքեւ, մի քանի խրթին նախադասություններից հետո՝ «նախքան անկախությունը 14 կրոնական կամ աստվածային կազմակերպություններ գործում կամ գրանցված էին Հայաստանում»: Ուշադրություն դարձրեք նաեւ «աստվածային (divine) կազմակերպություններ» բառակապակցությանը եւ, Աստծո սիրուն, բացատրեք, թե ի՞նչ է դա: Ես անկարող եմ հասկանալ այդ արտահայտությունը: Լեզուն, ինչպես նշեցի, ոչ միայն սոսկալի վատ է, այլեւ՝ անմիտ:

Բրոշյուրը միաժամանակ վիրավորական է հենց այն հաստատության համար, որին կոչված է ծառայելու կամ այն խմբին, որի հանդեպ հանդուրժողականություն պետք է դրսեւորվի: «7-րդ օրվա ադվենտիստների (գալստականների) եկեղեցու», «Ավետարանական եկեղեցու», «Հոգեգալստական (պենտեկոստական) եկեղեցու», «Հարե Կրիշնայի», «Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու» փոխարեն բրոշյուրի հեղինակները նրանց վիրավորական ձեւով անվանում են համապատասխանաբար «7-րդ օրվա եկեղեցու ադվենտիստներ», «Ավետարանային եկեղեցի», «Պենտեկոստներ», «Հարե Կրիշնայի հետեւորդներ» եւ «Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցի»:

Հեղինակները նաեւ տգետ են: Առանց տատանման, համոզվածությամբ նրանք խոսում են «Օսման կայսրության» մասին (1): Բրոշյուրը լի է «խղճի անկախության» (Liberty of conscience), «կարելի է պատմականորեն բաժանել», (can be conditionally divided), «որպես կանոն, նոր համայնքներն ակտիվորեն քարոզում են» (As a rule, new communities have been preaching actively), «Հայաստանում տեղի են ունեցել դատական նիստեր, որոնց կողմ(ից) են կրոնական համայնքներն ու կրոնական համայնքների անդամները» (in Armenia have taken place Court trials, which sides are religious Communities and members of religious communities), «փոխարինելով վիճող հարցերը դեպի դատարան» (replacing the disputing questions to the Court), «օրենքը մնում է իրական խնդիր» (Law remains the true to lif issue), «տնային գործունեության ոլորտը» (the field of houshold activities), «ժողովրդավարական ավանդույթների բացակայությունը խոչընդոտում է քաղաքացիական հասարակության կազմությանը» (absence of democratic traditions obstacle the formation of civil society) եւ այլ անհեթեթություններով: Նշեմ, որ այս մեջբերումների հարցում կանգ եմ առել 3-րդ էջում: Չկարողացա շարունակել:



Նախքան մի այլ թեմայի անցնելը, թույլ տվեք խոսել շապիկի վրա տեղ գտած կազմակերպության անվանման «գեղեցկության» մասին: «Անվանումն ի՞նչ կարեւոր է» հարցին պատասխանեմ. «Շատ է կարեւոր»: Անվանման ամենակարեւոր հատկանիշն է սեփական գոյի բացահայտումը, հատկապես երբ խոսքը վերաբերում է մի կազմակերպության: Մի պահ անտեսելով «համագործակցություն» (collaboration) բառի բացասական լրացուցիչ իմաստը, թույլ տվեք հարցնել, թե ով ո՞ւմ հետ, ի՞նչ գնով եւ վերջապես ի՞նչ նպատակով է համագործակցում: Մի՞թե չէին կարող ավելի դրական երանգ մտցնել իրենց անվանման մեջ, ընտրելով բառի նույնիմաստ, սակայն ավելի չեզոք մի տարբերակ, ինչպես, օրինակ, «cooperation»-ը: Ոչ, չէին կարող: Պետք է այդ անվանումը լիներ: Պետք է ապակու նման ջինջ ու հստակ բնորոշեր իրենց գոյությունը: Չէ՞ որ խմբագրականում բազմիցս խոսվում է մի բան «կատարելու» մասին: Մարդ ի կատար է ածում ինչ-որ պատվեր, հրաման կամ պահանջ: Ո՞ւմ պատվերը, հրամանը կամ պահանջն է կատարում այս խմբակցությունը:

Վերադառնանք կազմակերպության անվանման խնդրին՝ «Համագործակցություն հանուն ժողովրդավարության միություն»: Մի կողմ թողնելով դրան առնչվող վերոնշյալ անպատասխան մնացած հարցերը, այն մասին, թե ով ո՞ւմ հետ է համագործակցում, մի միություն ինչ-որ մեկի հետ հանուն ժողովրդավարությա՞ն, թե՞ ինչ-որ մեկը ժողովրդավարությանն է միանում, համագործակցելով ուրիշների հետ, ես պարզապես ցանկանում եմ նշել, որ այդ անվանումը հրաշալի հայտնագործություն է, երեք գոյականով եւ մեկ նախդիրով ստանալ մի նախադասություն եւ արտահայտել ինչ-որ մի իմաստ: Տրամաբանությունը հետեւյալն է. բառերը կողքկողքի դնելով ստանալ «իմաստալից» մի նախադասություն: Եվ այս տգետ մարդկանց է վստահված հայ ժողովրդի կարեւորագույն խնդիրների առաջնահերթությունը վերափոխելու պարտականությունը:

Նրանք, ովքեր հովանավորել են այս կազմակերպությանը՝ նախ «հետազոտելու», ապա եւ հրատարակելու տույն բրոշյուրը, ակներեւաբար իրենց մտքում ունեցել են հայաստանյան մի քանի թերթերին վարկաբեկելու որոշակի նպատակ: Այդ է եղել պահանջը: Իսկ առիթը դատական մի գործ՝ ազանդներից մեկի «քարոզչի» սխալ արարքի վերաբերյալ, որն, ըստ երեւույթին, որոշ թերթեր մեկնաբանել են կազմակերպության հովանավորողների սպասումներին հակառակ: Ինչպիսի՞ համարձակություն: Պետք է նրանց դաս տալ: Եվ այդպես բրոշյուրում թերթերը դարձել են սուր ճնշադատության թիրախ:

Բրոշյուրը կազմողները փորձել են անհաջող կերպով ինչ-որ մի շարժում առաջացնել, մի թեմայից մյուսին անցնելով, չպատճառաբանված մեղադրանքներ տեղալով նշված թերթերի վրա եւ դրանց արանքում չմոռանալով հիշատակել նաեւ Հայ առաքելական եկեղեցու համաշխարհային ներքին երկփեղկվածության մասին: Մարտավարությունը հստակ է: Մարդկանց շփոթության մատնել, նվազեցնել հակառակորդի արժանիքները: Ի վերջո, հովանավորողների մտքում իսկական մեղավորը Հայաստանյայց առաքելական եկեղեցին է, որին պետք է ջախջախել եւ ընկճել:

Այդպես չէ, որն Սորոս: Դուք սովոր եք ձեր ցանկացածը ձեր ձեւով կատարելու, ձեր այսպես կոչված «հաստատությունների» կամ նման կառույցների կորձանարար բարեգործությունների միջոցով, երկրների խաղաղությունը խախտելու եւ հասարակությունը քայքայելու միջոցով:

Ըստ երեւույթին, ձեր ախորժակը սրվել է Հայաստանի մերձակայքում ձեր այնքան հեշտությամբ ձեռք բերած նորագույն նվաճումների հետեւանքով:

Սիրելիներ, դուք պետք է որոշեք այժմ արժանի հակահարված տալ այս նոր սպառնալիքին: Սկզբունքներին չդավաճանելու եւ վճռական լինելու շնորհիվ դուք կարողացել եք վերադարձել հակառակ ամեն դժվարությունների եւ խոչընդոտների: Հուսով եմ, ձեր բնավորության այդ աստվածատուր գծերը չեն ամլացել եւ Հայաստանի ներկա պայմաններում անգամ, դուք ձեր մեջ ուժ եւ միջոցներ կգտնեք դեմ կանգնելու այս նոր սպառնալիքին:

ՓԱՌԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

«Ազգի» խմբագրության կողմից ավելացնենք, որ բրոշյուրում սխալ են գրված նաեւ մի շարք հայկական թերթերի անվանումները, օրինակ, «Hajots ashkhar», «Hajkakan zhamanak», «Iravunk», «Erkrapah», որոնք դարձել են «Հաջոց աշխարհ», «Հաջկական ժամանակ», «Իրավունք» եւ «Երկրապահ», նաեւ «Karabakh» (Ղարաբախ) Tiran Kjurehyan (Տիրան Քջուրեհյան), Ghazaros Kjureghyan (Ղազարոս Քջուրեղյան) անունները: Իսկ Մայր աթոռը պարզապես անգլերենում էլ մնացել է «Mair ator», փոխանակ թարգմանվելու «Holy see» բառերով:

Ավելացնենք նաեւ, որ հոդվածագիրը, նպատակ ունենալով իր խոսքն ավելի շուտ հասցեագրելու Բաց հասարակության ինստիտուտին, հոդվածը գրել է անգլերեն, որը թարգմանաբար ներկայացրել ենք արեւելահայերենով:

ՊԵՏԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

Գրիգոր Հարությունյանի անունով անգամ փողոց չկա

Այս օրերին լրանում են Գրիգոր Հարությունյանի (Արտիշով) ծննդյան եւ մահվան հերթական տարեթվերը, ինչը գրելու առիթ է այս հայրենասեր եւ շինարար պետական գործչի մասին: Ծնվել է Արեւելյան Վրաստանի հայաբաս Թելավում 1900 թ. նոյեմբերի 7-ին, մահացել է Թիֆլիսում 1957 թ. նոյեմբերի 9-ին: Հարությունյանի կյանքի 20 տարիներն անցել են Հայաստանում, որից 17-ը՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի, ասել է թե՝ խորհրդային Հայաստանի ղեկավարի պաշտոնում:

Եթե խորհրդային Հայաստանի նախկին ղեկավարներից ոմանք հերոսացվել ու հերոսացվում են, ապա Հարությունյանի մասին, որը հանրապետությունը ղեկավարել է ամենաերկարը եւ դժնդակ ու ծանր ժամանակներում (1937-53 թթ.), չափազանց քիչ է գրվել ու գրվում: Հայաստանի տարածքում նրա անունով չկա որեւէ փողոց, հուշարար, հրապարակ, ոչինչ չկա: Մինչդեռ Հարությունյանը ոչ միայն եղել է Հայաստանի ամենաշինարար ղեկավարը, այլեւ հայ ժողովրդի համար կարեւորագույն հարցերով՝ Ղարաբաղ, Արեւմտյան Հայաստան, հայրենադարձություն, դիմել է Ստալինին, որի գործուն միջամտությամբ էր Ղարաբաղը տրվել Ադրբեջանին:

Հարությունյանին լավագույն կերպով բնութագրում է հետեւյալ փաստը. 1953 թ. նոյեմբերի 30-ին «որպես քաղաքական վստահություն չվայելող» անձնավորություն նա հեռացվում է ՀԿԿ Կենտկոմի կազմից եւ մի քանի ամիս անց աշխատանքի անցնում որպես էջմիածնի շրջանի Կալինինի անվան խորհրդային տնտեսության տնօրեն ու աշխատում երկու տարի: Դժվար է պատկերացնել Հայաստանի մեկ այլ ղեկավարի (մեր օրերում՝ նախագահի), որը կհամաձայներ պաշտոնանկությունից կամ պաշտոնավարության ավարտից հետո գյուղխորհրդի նախագահ աշխատել:

Հարությունյանը, որ մինչ Կենտկոմի քարտուղար նշանակվելը ընդհանրապես չէր եղել Հայաստանում եւ հայերեն չգիտեր, ըստ ժամանակակիցների, եղել է Հայաստանի ղեկավարներից թերեւս ամենաազգայինը, հայրենասերը, շինարարը: Նրա իշխանության տարիներին են նախագծվել եւ կառուցվել Սասունցի Դավիթ կայարանը, կառավարության այսօրվա շենքը (արտգործնախարարության եւ էներգետիկայի նախարարության մասնաշենքերը), Մատենադարանը, խորհրդարանի շենքը, կոնյակի գործարանը, Հաղթանակի կամուրջը:

1945 թ. նոյեմբերի 21-ին ԽՍՀՄ կառավարությունն ընդունում է սփյուռքահայության ներգաղթը Հայաստան իրականացնելու որոշումը, ըստ Ստալինին ուղարկած Հարությունյանի նախագծի: Կարճ ժամանակի ընթացքում Հայաստան են վերադառնում 100 հազար սփյուռքահայեր: Ղարաբաղի մասին առաջինը հենց Հարությունյանն է հիշեցրել Ստալինին 1945 թ. նոյեմբերին: Ընդ որում, Հարությունյանը Ստալինին առաջարկում է ոչ միայն Ղարաբաղը միացնել Հայաստանին, այլեւ մարզի կենտրոնը Ստեփանակերտից տեղափոխել Շուշի, «որն ավերվեց խորհրդային կարգեր հաստատելուց առաջ»:

Նույն թվականին Հարությունյանը Ստալինին հղած նամակում, ապա եւ «Պրավդայում» հրապարակած հոդվածում հիշեցնում է, որ թուրքերը, օգտվելով հայերի անօգնական վիճակից, գավթել են Կարսը, Արդահանը, Սարիղամիշը, Կարգվանը: Հարությունյանը բարձրացնում է Կարսի մարզը եւ Սուրմալուի գավառը խորհրդային Հայաստանին միավորելու հարցը, որտեղ եւ կարող էին վերաբնակվել հայրենադարձները:

1956 թ. Հարությունյանը Հայաստանից հեռացավ եւ մեկ տարի աշխատեց Թբիլիսիում: 1957 թ. նոյեմբերի սկզբին նա հիվանդանում եւ մի քանի օր անց մահանում: Հայաստանից նրա թաղմանը պաշտոնական պատվիրակություն չի գնում: Միայն Կենտկոմի վարորդներն են մասնակցում Հարությունյանի հուղարկավորությանը:

2000 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը հրատարակեց Գրիգոր Հարությունյանի «Կյանքն ու գործունեությունը» գիրքը, որից եւ օգտվել ենք այս փոքր հրապարակումը պատրաստելու համար:

Ռ. Հ.

«Նա ստեղծում է իր նախասիրած «ժողովրդավարությունը»: Մի կուսակցություն իր ձեռքում է վերցնում երկրի ամբողջ իշխանությունը եւ հսկողություն սահմանում ամեն ոլորտում՝ ստեղծելով մեկ լրատվական ցանց, որը հանդես է գալիս որպես պետական հեռուստատեսություն, մեկ պետություն, որը տիրապետում է աշխարհին որպես միակ գերհզոր իշխանություն եւ մեկ ֆիրմա («Հալիբարտոնը»- խմբ.), որը հսկում է առեւտրական պայմանագրերի ստորագրումը Իրաքում», գրում է նա եւ շարունակում՝ մեջբերելով Բուշի վարչակարգի անդամներից մեկի կանխագուշակումները:

«Հիմա նա շատ ավելի ագրեսիվ է դառնալու Իրաքում: Եթե պետք լինի, հողին է հավասարեցնելու Ֆալուջան: Նա հավատացած է, որ ընտրությունները հաստատեցին պատերազմ մղելու իր տարբերակը», հոգ չէ, թե ինչքան շատ ամերիկացիներ սպանեն:

«Մի որպե լսենք Դիկ Չեյնիին», այնուհետեւ գրում է Մորին Դոուդին, փակագծում բացականչելով. «Օ, տեր իմ, մի՞թե այս կկվի ժամացույցը (բացբերանը) դեռ փոխնախագահ է»: «Ներկայացնելով նախագահին՝ կատարելու հաղթանակի առթիվ իր ելույթը, Չեյնին ասաց. «Սա արժանի հետեւանքն է նախորդ նախագահության, որը վերակենդանացրել է մեր տնտեսությունը եւ վերահաստատել վստահությունն աշխարհում՝ հանդեպ ամերիկյան դեռակատարության»:

Դե, ճիշտ է, վերակենդանացրել է մեր տնտեսության «Հալիբարտոն» հատվածը: Իսկ մի՞թե «վստահության վերահաստատում» կարելի է որակել այն, որ արտաքին հաղթականության ասպարեզում Ամերիկան օտարացրել է բոլորին, բացի Ֆիջիից (Ճապոնիա), մեկնաբանում է Դոուդին եւ շարունակում, հիմա մենք առաջ ենք շարժվում պահպանելու մեր սիրած երկիրը եւ ծառայելու դրան»: Բայց նա այնպես արտասանեց «ծառայելու» եւ «պահպանելու» բառերը, կարծես ցանկանար ասել «բռնաբարելու եւ թալանելու»: Նախագահը վերընտրվեց՝ երկիրը բաժանելով վախի, անհանդուրժողականության, տգիտության եւ կրոնական կեղծ ու շինծու գոտիների: Ի հակադրություն Ջոն Քերիի, որն իր զիջման, խաղից դուրս գալու ճառն արտասանելիս խոսեց «բաժանման վտանգավորության եւ միասնականությունը պահպանելու անհրաժեշտության» մասին, Բուշը վտանգ չի տեսնում բաժանման մեջ: Նա ջիհադը բերեց Ամերիկա, որպեսզի կարողանա դրա դեմ պայքարել Իրաքում: Նաեւ կարողացավ հավատացյալ ավետարանականներին (կամ այսպես կոչված «արժեքների օգտին քվեարկողներին») քվեատուփեր առաջնորդել վիժումներին դեմ արտահայտվելով, տոհմաբջջի ուսումնասիրություններին եւ արվամոլների ամուսնություններին դեմ լինելով:

Բուշը, որի վարչակարգը կեղծ հիմնավորումներով մեզ ներգրավեց իրաքյան պատերազմում եւ մեր զորքերին դրեց անբարոյական վիճակի մեջ՝ չունենալով պատերազմից դուրս գալու հստակ մարտավարություն, փաստորեն հաղթանակ տարավ «բարոյական խնդիրների» վրա ժողովրդի ուշադրությունը գրավելով: Նա ասում է, որ ցանկանում է «հասանելի լինել բոլորին, հոգատար լինել բոլորի կարիքներին»: Ինչպիսի՞ կեղծավորություն: Բուշերը «գթասիրտ, զիջողամիտ» են լինում այնքան ժամանակ, քանի դեռ իրենց ցանկացածը չի կատարվում: Եթե 2000 թ. ընտրությունից հետո (երբ հազիվ կառչեց հաղթանակից) նա ձեռք չմեկնեց ժողովրդի տարբեր խավերին, ինչո՞ւ պիտի հիմա մեկնի, երբ, ըստ Չեյնիի, «համընդհանուր, լայնատարած» հաղթանակ է տարել, գրում է Մորին Դոուդին:

«ԵՅՈՒ ՅՈՐՔ ԹԱՅՄՍ»

Բաժանման մարտավարությունը

Բուշերը գթասիրտ եւ զիջողամիտ են, քանի դեռ իրենց ցանկացածը չի կատարվել

Անդրադառնալով Մ. Նահանգներում վերջերս կայացած նախագահական ընտրություններին, հեղինակավոր «Նյու Յորք թայմս» թերթը մի քանի իրարահաջորդ հոդվածներում քննության է առնում Դեմոկրատական կուսակցության պարտությունը: Նոյեմբերի 3-ին լույս տեսած «Արդելով աղքատ քվեարկել հզոր հարուստների» հոդվածից հետո (թարգմանությունը տես «Ազգի» նոյեմբերի 9-ի համարում) հաջորդ օրը՝ նոյեմբերի 4-ին, թերթը հրատարակել է Մորին Դոուդի «Կարմիր գոտին» վերնագրով հոդվածը, որտեղ հեղինակը քննադատական խոսքեր է ուղղում Հանրապետական կուսակցության եւ մասնավորապես վերընտրված նախագահ Ջորջ Բուշի քաղաքականության հասցեին:

Փլորիդայում սկսվել է աշխարհի ամենածանր ռումբի մշակումը

Ամերիկյան «Էգլին» ռազմաօդային բազայում (Փլորիդա) սկսվել են նորագույն ռումբի մշակման աշխատանքները, որն ամենածանրն է լինելու ամբողջ աշխարհում:

Ասոշիեյթեդ Պրես գործակալությունը հաղորդում է, որ MOP պայմանական անունով հայտնի նոր ռումբի քաշը լինելու է 13600 կգ, որը 1/3-ով գերազանցում է Իրաքի պատերազմի նախօրեին ստեղծված եւ «Բոլոր ռումբերի մայր» անունն ստացած հսկա ռումբի քաշին:

Նախագծի տեխնիկական տնօրեն Ֆրեդ Դեփսի խոսքերով, «նոր ռումբը նախատեսված է թիրախի ներսը թափանցելու համար. այս պատճառով էլ առավել ծանր է»: Ի տարբերություն իր նախորդի, որը պայթում էր անմիջականորեն երկրի վրա, նոր ռումբը կպայթի խոր ընդերքում կամ թիրախի ներսում եւ կկարողանա ավերել գետնոտիներ, բունկերներ կամ բարձր շենքեր:

Ենթադրվում է, որ նոր ռումբի մշակման եւ փորձարկման համար կպահանջվի մոտ 16 ամիս: Պենտագոնը նախնական հետազոտություններին հատկացրել է 500 հազար դոլար:

Թուրքմենստանում ազատ արձակված 9000 բանտարկյալներից 150-ը օտարերկրացիներ են

Թուրքմենստանի նախագահի հրամանագրով ավելի քան 9000 անձինք ազատ են արձակվել կալանավայրերից: Նրանցից 150-ը օտարերկրացիներ են: Երկրի գլխավոր դատախազությունում ՌԻԱ գործակալության թղթակցին հայտնել են, որ ներումը շնորհվել է մահմեդական տոմարի «Ամենաթողության օրվա» առթիվ:

Ներում ստացած անձանց անվանական ցանկերը տպագրվել էին թուրքմենական երկու գլխավոր թերթերի հոկտեմբերի 24-ի համարներում:

Վերջին տարիներին նախագահական համաներումների շնորհիվ ազատ է արձակվել ավելի քան 130 հազար մարդ: Արձակված անձինք Դուրանի, հացի, ինչպես նաեւ նախագահի գրած գրքի՝ «Ռուխնամեի» վրա երդվում են, որ այլեւս հանցանքներ չեն գործի:

Ըստ նախագահի հատուկ հանձնարարականի, հանրապետության տնտեսական ղեկավարները եւ տեղական վարչակազմերը պարտավոր են համակողմանիորեն նոր ազատված անձանց աջակցել աշխատանքի տեղավորման հարցում:

Անտվերպենում բացահայտվել է կավատների ռուս-բելգիական հանցախումբ

Բելգիայի Անտվերպեն քաղաքի ոստիկանությունը վերջ է դրել ռուս-բելգիական մի հանցախմբի գործունեությանը, որն զբաղվում էր ռուսաստանցի աղջիկների վաճառքով:

Տեղական լրատվամիջոցների հաղորդումները վկայակոչելով ՌԻԱ գործակալությունը նշում է, որ արտասահմանում աշխատանք ստանալու ակնկալությամբ աղջիկներից յուրաքանչյուրը Ռուսաստանում 900 դոլար էր վճարում ինչ-որ ճամփորդական գրասենյակի եւ «էլիտ պրոֆ» մոդելային գործակալությանը: Աղջիկներին ուղարկում էին Բելգիա: Նրանք որոշ ժամանակ մնում էին երկրի հյուսիսում՝ Ֆլանդրիայում, ապա կեղծ անձնագրերով տեղափոխվում Ֆրանսիայի, Հունաստանի, Իտալիայի, Իսպանիայի եւ Հարավային Կորեայի ընդհատակյա հասարակաց տներ:

Կառավարության եւ կեղծ փաստաթղթերի պատրաստման մեղադրանքներով Բելգիայում դատական պատասխանատվության են ենթարկվելու 13 անձինք:

Պ. Ք.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

«Հայաստանը եւ Ադրբեջանը բացասաբար են գնահատում Վրաստանի դերը»

Ամերիկյան Բրուքինսի ինստիտուտի ավագ գիտաշխատող Ֆիոնա Հիլը կարծում է, որ Հարավային Կովկասում գոյություն չունի ընդհանուր օրակարգ, որը կարող է նպաստել տարածաշրջանի երկրների համատեղ զարգացմանը, հաղորդում է «Մեդիամաքսը»: «Կովկասում բոլոր տարածաշրջանային երկրներն ընդամենն իրենց սեփական խաղն են տանում: Շատ հետաքրքրական է համեմատել Կովկասը բալթյան երկրների հետ, որտեղ ընթացել եւ ընթանում են նույն բանավեճերը, ինչը Կովկասում՝ եվրոպային ինտեգրվելու, ՆԱՏՕ-ի հետ համագործակցության մասին եւ այլն: Բալթյան երկրները հաջողությամբ լուծեցին այդ խնդիրները, քանի որ գործում էին համատեղ: Նրանք կարողացան ձեւակերպել ընդհանուր նպատակներ, չնայած դա հեշտ չէր: Այդ երկրները շատ տարբեր են իրարից, յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ պատմությունը: Բալթյան հանրապետություններն ընդհանուր պատկերացում ունեն Ռուսաստանի՝ որպես սպառնալիքի մասին, ինչը թույլ տվեց համախմբվել Լատվիային, Լիտվային եւ Էստոնիային», նշել է Հիլը:

«Կովկասում ամեն բան այլ է: Չկա ընդհանուր օրակարգ, որը կարող էր նպաստել տարածաշրջանի երկրների համատեղ զարգացմանը: Առանցքային հարցը նրանց միջեւ փոխգործակցության բացակայությունն է: Ես համոզված չեմ, որ Վրաստանը կարող է կատարել տարածաշրջանի երկրներն իրար կապող «կամրջի» դերը, քանի որ Հայաստանը եւ Ադրբեջանը բացասաբար են գնահատում Վրաստանի դերը: Ներկայումս մենք ականատես ենք երեք հանրապետությունների միջեւ մրցակցության, ընդ որում այն տեղի է ունենում ոչ միայն տարածաշրջանի շրջանակներում, այլեւ Փարիզում, Լոնդոնում, Մոսկվայում եւ Վաշինգտոնում», ասել է Հիլը:

«Էխոնը» հիասթափված է Ադրբեջանից

Ադրբեջանում Մ. Նահանգների «Էխոն-մոբիլ» նավթարդյունաբերական ընկերության հույսերը հօդս են ցնդել. առաջին փորված նավթահորը առեւտրական տեսակետից բավարար պաշարներ չի պարունակել: Այս մասին է հաղորդում «Արմինյն միրոր սփեթեյթր» թերթը՝ հենվելով Ռոյթեր գործակալության լրատվության վրա:

«Բավարար պաշարներ չգտնելով, որոշեցին փակել Զաֆար-Մաշալի նավթահորը», տեղեկացրել է «Էխոնի» խոսնակ Լեյլա Ռզակուլիեան, ավելացնելով, որ առայժմ վաղաժամ է խոսել ուրիշ նավթահորեր փորելու մասին:

Զաֆար-Մաշալի նավթահորն ամենախորն էր Կասպիականում եւ, ըստ ադրբեջանցի երկրաբանների, նաեւ ամենաթանկը՝ ավելի քան 100 մլն դոլար էր նստել «Էխոնի» վրա: Ընկերությունն այդ երեք միլիարդանոց ծրագրի արտասահմանյան գործընկերներից գլխավորն էր, որը հույս ուներ 30 տոկոսի շահույթ ստանալ: Մյուս ընկերությունը «Կոնոկոֆիլիպս» է (դարձյալ ամերիկյան), որն ակնկալում է 20 տոկոսի շահույթ: Իսկ մնացած 50 տոկոսը պետք է գնա պետական (ադրբեջանական) «Սոկար» ֆիրմային:

Պաղեստինցի 4 ղեկավարներ Փարիզ են մեկնել Արաֆաթին անձամբ տեսնելու

Սուհա Արաֆաթը շատերի համար առեղծված է

Չնայած 3ասեր Արաֆաթի կնոջ՝ Սուհայի ընդդիմությանը, Պաղեստինյան ինքնավարության 4 ղեկավարներ երեկ գիշեր Փարիզ են մեկնել, որպեսզի անձամբ ծանոթանան Կլամարի հիվանդանոցի ինտենսիվ թերապիայի բաժանմունքում բուժվող Արաֆաթի առողջական վիճակին:

Հիվանդանոցից ստացված լուրերի համաձայն, երեկ գիշեր նա վերստին հայտնվել է ամենածանր՝ 4-րդ աստիճանի կոմայի վիճակում:

Ֆրանսիրեսը հաղորդում է, որ հիշյալ 4 ղեկավարներն են Պաղեստինի վարչապետ Ահմեդ Կուրեին, Պաղեստինի ազատագրման կազմակերպության գլխավոր քարտուղար Մահմուդ Աբբասը (Աբու Մազեն), արտգործնախարար Նաբիլ Շաաթը եւ օրենսդիր խորհրդի նախագահ Ռաուհի Ֆաթուհը: Նախագահ Ժակ Շիրակը երեկ ընդունել է պաղեստինյան պատվիրակության անդամներին:

Սուհա Արաֆաթը երկուշաբթի օրն «Ալ Ջազիրա» հեռուստաընկերության եթերում հայտարարել էր, թե Պաղեստինյան ինքնավարության ղեկավարներն ուզում են «ողջ-ողջ թաղել» իր ամուսնուն: Իրենց հերթին պաղեստինցի ղեկավարներից ոմանք Սուհային հիշեցրել էին, որ վերջին երեք տարիներին նա պարել է առանձին եւ չի տեսակցել ամուսնու հետ: Իրավիճակը մեղմելու նպատակով Ֆրանսիայի պաշտպանության նախարար Միշել Ալիո-Մարին նույնիսկ հայտարարել էր, թե պաղեստինցի ղեկավարների այցը չի կայանա Սուհայի ընդդիմության պատճառով:

Բայց այցն այնուամենայնիվ կայացավ: «Լը Բուրժե» օդանավակայանում ինքնաթիռից իջնելով՝ Ահմեդ Կուրեին ափսոսանք արտահայտեց «քույր Սուհայի» դիրքորոշման առթիվ եւ ավելացրեց, որ «Արաֆաթը պատկանում է պաղեստինցի ժողովրդին»:

BBC-ն նշում է, որ Արաֆաթի կինը՝ Սուհան, մինչեւ օրս առեղծված է մնում շատերի համար: Սուհան մեծացել է ներկայիս Պաղեստինյան ինքնավարության տարածքում, կաթոլիկների ընտանիքում: Ավարտել է Սորբոնի համալսարանը եւ երկար ժամանակ աշխատել Փարիզում: 3ասեր Արաֆաթի հետ ծանոթացել է մոր՝ հայտնի լրագրող Ռեմոնդ Թաուտիլի միջոցով: Ծանոթությունից հետո Սուհան տեղափոխվել է Թունիս եւ աշխատանքի անցել ՊԱԿ կենտրոնակայանում: Այնտեղ ընդունել է իսլամ, իսկ 1999 թ., երբ ինքը 30 տարեկան էր, իսկ Արաֆաթը՝ 60, պաշտոնապես ամուսնացել է նրա հետ:

Սակայն պաղեստինյան մամուլը պնդում է, որ Ռամալլա վերադառնալուց հետո Սուհան եւ 3ասերն ապրել են առանձին հարկաբաժիններում: Վերջերս Սուհան վերադարձել է Փարիզ, որտեղ ապրում է մոր եւ 9-ամյա դստեր՝ Զավայի հետ: ՁԼՄ-ները նշում են, որ Սուհան սիրում է թանկարժեք հագուստներ եւ հաճախ հանդես է գալիս բացահայտ հակաիսրայելական հայտարարություններով:

Ֆրանսիական մամուլը 3ասեր Արաֆաթի շուրջն ստեղծված խառնաշփոթը բացատրում է պաղեստինյան տարբեր խմբավորումների ներքին պայքարով, որի նպատակն Արաֆաթի ունեցվածքին եւ ՊԱԿ-ի ֆինանսներին տիրանալն է: «Լիբերասիոն» թերթի տվյալներով, Արաֆաթին ենթակա ՊԱԿ-ի հաշիվներում կարող է լինել 4-7 մլրդ դոլար:

Պ. Ք.

Մշակութային կյանք ազգանվան վերջնավանկի հպարտությամբ

«Ստեղնաղ» կամերային նվագախմբի այս համերգաշրջանը բացառիկ կլինի բոլոր առումներով, ինչի աղացույցը մեր առաջին համերգն է, աշխարհահռչակ դաշնակահար Ալեքսեյ Լյուբիմովի մասնակցությամբ: Իսկ Հայաստանի եւ սփյուռքի մշակութային կաղերի ամրապնդման նոր խթան կդառնա նորահայտ ասող Տանյա Գաբրիելյանի հետ մեր համագործակցությունը»: Կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր խմբավար էդ. Թոփչյանի սպասելիքները թերեւս լիովին արդարացան: Նոյեմբերի 7-ին Արամ Խաչատրյանի անվան համերգային դահլիճում կայացավ միջազգային մրցույթների եւ փառատոների հաղթող կամերային նվագախումբը դարձել հայտնի եւ ճանաչված անուն երաժշտական կյանքում: Այս տարի «Ստեղնաղը» մասնակցել է Հունգարիայում տեղի ունեցած Բարեկամության միջազգային փառատոնին: Սեպտեմբերին Գերմանիայում երաժշտական փառատոնին մասնակցության պարտադիր պայման էր ներկայացնել fn հայրենիքը: Այստեղ եւ Հայաստանը ներկայացնող ինքնատիպ մշակութային այցեքարտ դարձան կամերային նվագախմբի Տ. Մանսուրյանի, էդ. Միրզոյանի եւ Դավիթ Ղազարյանի գործերի կատարումները:

«Գերմանիայում գործում է «Ստեղնադի» բարեկամների միությունը, որի բոլոր անդամները տարբեր զբաղմունքի եւ մասնագիտությունների տեր երաժշտասեր գերմանացիներ են: Գերմանացի հանդիսատեսը բացառիկ է իր ջերմ սիրով եւ նվիրումով: Թերեւ դասական երաժշտություն ունկնդրելու եվրոպական դարավոր ավանդույթն իր դերակատարումն ունի այս հարցում», ասում է նվագախմբի հասարակայնության հետ կապերի համակարգող Սոնա Հովհաննիսյանը: «Գերմանիան զարմանալի երաժշտական երկիր է, շարունակում է նվագախմբի առաջին ջութակ Արամ Ասատրյանը: Այնտեղ համարյա յուրաքանչյուր քաղաք, ինչպիսին, ասենք, մեր Թալինն է, Գորիսը կամ Աթարանը, ունի իր սիմֆոնիկ նվագախումբը»:

«Ստեղնաղը» բոլորել է իր 13 տարին: Սակայն այլեւ 13 տարեկան չեն նրա երաժիշտները: Միայն ոգեւորված ներշնչանքով խումբը չի կարող աշխատել: Այս տարիների ընթացքում «Ստեղնաղն» ընդունել եւ ճանաչել է 90 երաժիշտների: Հոսունության պատճառը մեկն է՝ պրոֆեսիոնալ երաժիշտն ու համույթը չեն կարող մի կերպ գոյատեւել: Բազում խնդիրներ ունի երաժշտական մշակութային աշխարհը: Եվրոպայում ուսանած Կոմիտասի համար Մանթաշովը ռոյալ գնեց եւ Բեռլինից հասցրեց էջմիածին: Այսօր եւ Երեւանի կոնսերվատորիան ռոյալների կարիք ունի: Սակայն լուռ ու անտեսանելի են Մանթաշովները:

Նույն Գերմանիայում հարկային որոշակի արտոնյալ պարտավորությունների շնորհիվ գործարար աշխարհը սատարում իր երկրի հոգեւոր եւ մշակութային կյանքը: Եվրոպական բազմաթիվ փառատոների գլխավոր հովանավորի առաջին պատվավոր տեղը զբաղեցնում է տվյալ երկրի մշակույթի նախարարությունը: Անչափ կարեւոր է պետության քարոզչական դիրքորոշումը: Ֆինանսական եւ բարոյական աջակցության օրինակելի պահվածք է որդեգրել Ռուսաստանը՝ մշակութային օջախներին սատարող պետական հիմնադրամներ ստեղծելով: Մշակույթը, թերեւ, ուրիշի կախարդական հայելու պես է, որ անխարդախ կերպով արտացոլում է իրականությունը:

Կան ոլորտներ, որոնք դուրս են աշխատատեղերի ստեղծման դասական պատկերացումներից: Դրանցից են նվագախմբերը: Վերջին-ներս տարիների համառ ու տքնաջան աշխատանքով դժվարությամբ ստեղծված, բազմիցս հոկված մշակութային բացառիկ արժեքներ են, որոնք գնահատել եւ պահպանել է պետք: Հաղաղումն ու թերացումները շատ դեպքերում կարող են դառնալ ճակատագրական: Այսօր աշխարհի տարբեր բեմերում բազմաթիվ հայ երաժիշտ կատարողներ հանդես են գալիս այլ երկրների անունից՝ մեզ թողնելով միայն իրենց հայկական ազգանվան վերջնավանկի հպարտությունը: Շա՞տ է, թե՞ քիչ: Խորհել է պետք: Որոշողը մենք ենք:

ԱՇՈՏՆՈՒՀԻ ԲԱԲՈՒՄՅԱՆ

«Ստեղնաղ» կամերային նվագախմբի համերգը: Հայ հանդիսատեսը բացառիկ հնարավորություն ունեցավ ունկնդրելու Լոնդոնի երաժշտական արքայական ակադեմիայի եւ Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր, դաշնակահար Հեմիշ Միլնին: «Ստեղնաղը» կրկին գերեց իր հանդիսատեսին՝ նրան պարգեւելով կատարյալ երաժշտություն վայելելու բերկրանքը:

Տեւական ծափողջույններից հետո հանդիսատեսը հեռացավ դահլիճից՝ իր հետ տանելով Մոցարտի հոգեթով ստեղծագործությունների, ինչպես նաեւ «Կարմեն-Սյուիտի» ինքնատիպ կատարման գրավչությունը, վիրտուոզ կատարողների վարակիչ ներշնչանքը:

Այսօր դժվար է պատկերացնել, որ 1990-ականների ցուրտ ու անլույս տարիներին, մոմի բեկբեկուն լույսի ու նավթավառների «ջեռուցմամբ» է սկսել իր գործունեությունը «Ստեղնաղ» կամերային նվագախումբը: Երեւանի պետական կոնսերվատորիայի եւ Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի 13-15 տարեկան սաների ու երիտասարդ ղեկավար էդ. Թոփչյանի համար դա ոչ խիզախում էր եւ ոչ էլ հերոսություն, այլ իրենց սիրած գործը, ինչը պարզապես չէին կարող չանել: Առաջին ստեղծագործությունը Մոցարտի փոքրիկ գիշերային serենադն էր, որն իր քնարականությամբ միավորեց խմբին ու դարձավ նվագախմբի անվանումը: Այս տարի «Ստեղնաղը» դարձավ 13 տարեկան, այսինքն՝ տարիներ առաջ նվագախումբը հիմնադրած 13-ամյա ոգեւորված տղաների եւ աղջիկների տարիքին:

Երազող ու համարձակ, համառ ու խիզախող նվագախմբի համար այդ հոբելյանը նշելու դեպքում 13 թիվը դառնում է մի տեսակ սիրելի ու խորհրդավոր: Չէ՞ որ այդ տարիների տքնաջան աշխատանքի շնորհիվ է

Մշակութային կյանք ազգանվան վերջնավանկի հպարտությամբ

կամերային նվագախումբը դարձել հայտնի եւ ճանաչված անուն երաժշտական կյանքում: Այս տարի «Ստեղնաղը» մասնակցել է Հունգարիայում տեղի ունեցած Բարեկամության միջազգային փառատոնին: Սեպտեմբերին Գերմանիայում երաժշտական փառատոնին մասնակցության պարտադիր պայման էր ներկայացնել fn հայրենիքը: Այստեղ եւ Հայաստանը ներկայացնող ինքնատիպ մշակութային այցեքարտ դարձան կամերային նվագախմբի Տ. Մանսուրյանի, էդ. Միրզոյանի եւ Դավիթ Ղազարյանի գործերի կատարումները:

«Գերմանիայում գործում է «Ստեղնաղի» բարեկամների միությունը, որի բոլոր անդամները տարբեր զբաղմունքի եւ մասնագիտությունների տեր երաժշտասեր գերմանացիներ են: Գերմանացի հանդիսատեսը բացառիկ է իր ջերմ սիրով եւ նվիրումով: Թերեւ դասական երաժշտություն ունկնդրելու եվրոպական դարավոր ավանդույթն իր դերակատարումն ունի այս հարցում», ասում է նվագախմբի հասարակայնության հետ կապերի համակարգող Սոնա Հովհաննիսյանը: «Գերմանիան զարմանալի երաժշտական երկիր է, շարունակում է նվագախմբի առաջին ջութակ Արամ Ասատրյանը: Այնտեղ համարյա յուրաքանչյուր քաղաք, ինչպիսին, ասենք, մեր Թալինն է, Գորիսը կամ Աթարանը, ունի իր սիմֆոնիկ նվագախումբը»:

«Ստեղնաղը» բոլորել է իր 13 տարին: Սակայն այլեւ 13 տարեկան չեն նրա երաժիշտները: Միայն ոգեւորված ներշնչանքով խումբը չի կարող աշխատել: Այս տարիների ընթացքում «Ստեղնաղն» ընդունել եւ ճանաչել է 90 երաժիշտների: Հոսունության պատճառը մեկն է՝ պրոֆեսիոնալ երաժիշտն ու համույթը չեն կարող մի կերպ գոյատեւել: Բազում խնդիրներ ունի երաժշտական մշակութային աշխարհը: Եվրոպայում ուսանած Կոմիտասի համար Մանթաշովը ռոյալ գնեց եւ Բեռլինից հասցրեց էջմիածին: Այսօր եւ Երեւանի կոնսերվատորիան ռոյալների կարիք ունի: Սակայն լուռ ու անտեսանելի են Մանթաշովները:

Նույն Գերմանիայում հարկային որոշակի արտոնյալ պարտավորությունների շնորհիվ գործարար աշխարհը սատարում իր երկրի հոգեւոր եւ մշակութային կյանքը: Եվրոպական բազմաթիվ փառատոների գլխավոր հովանավորի առաջին պատվավոր տեղը զբաղեցնում է տվյալ երկրի մշակույթի նախարարությունը: Անչափ կարեւոր է պետության քարոզչական դիրքորոշումը: Ֆինանսական եւ բարոյական աջակցության օրինակելի պահվածք է որդեգրել Ռուսաստանը՝ մշակութային օջախներին սատարող պետական հիմնադրամներ ստեղծելով: Մշակույթը, թերեւ, ուրիշի կախարդական հայելու պես է, որ անխարդախ կերպով արտացոլում է իրականությունը:

Կան ոլորտներ, որոնք դուրս են աշխատատեղերի ստեղծման դասական պատկերացումներից: Դրանցից են նվագախմբերը: Վերջին-ներս տարիների համառ ու տքնաջան աշխատանքով դժվարությամբ ստեղծված, բազմիցս հոկված մշակութային բացառիկ արժեքներ են, որոնք գնահատել եւ պահպանել է պետք: Հաղաղումն ու թերացումները շատ դեպքերում կարող են դառնալ ճակատագրական: Այսօր աշխարհի տարբեր բեմերում բազմաթիվ հայ երաժիշտ կատարողներ հանդես են գալիս այլ երկրների անունից՝ մեզ թողնելով միայն իրենց հայկական ազգանվան վերջնավանկի հպարտությունը: Շա՞տ է, թե՞ քիչ: Խորհել է պետք: Որոշողը մենք ենք:

ԱՇՈՏՆՈՒՀԻ ԲԱԲՈՒՄՅԱՆ

Կնոջ մարմնի պոեզիան

Իր մանկավարժական եւ նկարչական բազմամյա փորձը Անատոլի Պապյանը նախ՝ Թեղենեզյանի ռասմնարանում, 1962 թ.-ից արդեն Գեղարվեստի ակադեմիայում շարունակում է փոխանցել երիտասարդ արվեստագետներին:

Հանրապետական եւ միջազգային բազմաթիվ ցուցահանդեսների մասնակցած նկարիչը բարեխիղճ ու պատասխանատու է իր աշխատանքի հանդեպ, նույնքան եւ անհավակնոտ: Երկար տարիներ՝ 1992-93-ի սոսկալի ձմեռներին հղացել է «Պատարագ» եռանկար մեծադիր կտավը՝ նվիրված միջնադարի հայ մեծ ողբերգուի՝ Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմին: Աշխատում է օրն ի բուն, վաղ առավոտից. նկարչությունը, արվեստն է կյանքի իմաստավորումը, լիցքը, ինչն իր դրսեւորումն ունեցավ օրերս գեղարվեստի ակադեմիայի «Ալբերտ եւ Թովմ Բոյաջյան» պատկերասրահում բացված ցուցահանդեսում: Նկարիչն արդեն 80 տարեկան է եւ ցուցադրությունն այդ առիթով էր: 80-ամյա նկարչի մոտեցումները կյանքին արված էր երիտասարդական ավյունով: Նկարաշարը

կնոջ մարմնի խորհրդի ոչ այնքան այսպես կոչված ակադեմիական գեղեցկության ցուցադրության, որքան մարմնի պլաստիկայի, շարժումի, կնոջ մարմնական ճկունության արտահայտությունն էր: Հիմնականում գրաֆիկական աշխատանքներում (պաստել, ածուխ, մատիտ) նույն բնորդուհին երեւում էր մարմնի գծագրումի ամենատարբեր ձեւերում՝ պառկած, կքած, նստած, թիկնած: Գծանկարների, նաեւ յուղաներկ աշխատանքների մեջ մարմնական տարբեր շեշտադրումները որոշակի տրամադրություններ՝ կապված օրվա տարբեր ժամերին, եւ հոգեբանական վիճակներ էին կրում: Անատոլի Պապյանը անհավակնոտ է. ասում էր, որ «սա մի համեստ դրսեւորում է վերջին շրջանում արված գործերի, որ հարմար գտա ցուցադրության, կանացի մարմնի պլաստիկան շատ եմ սիրում, ոգեւորվում եմ գեղեցիկով»:

Նկարչի գործընկերներն ու ուսանողները սիրով էին շրջապատել նրան, շատ էին խոսում իր բարությունից ու ազնվությունից: «Ինչքան պոեզիա, քնարականություն, լավատեսություն, սեր, բարություն կա այս մարմնի մեջ: Չգիտեմ ինչ բառեր կան բնութագրելու Անատոլի Պապյան մարդուն, գեղանկարչին: Շնորհակալ եմ ճակատագրից, որ հանդիպել եմ իրեն», ասում է Անատոլի Պապյանի նախկին ուսանող, այժմ իր մտերիմ բարեկամ եւ գործընկեր, ակադեմիայի կերպարվեստի ֆակուլտետի դեկան էդվարդ Վարդանյանը:

ՄԵԼԻՆԱ ԲԱԳՈՒՅԱՆ

ՀԱՆԳԻՊՈՒՄ

«Ես ինձ ուսումնասիրող եմ համարում»

Երեկ Մշակույթի հայկական ֆոնդի «Օիր կաթին» ակումբի հյուրը գող, «Ազգի» մշակութային էջի պատասխանատու **Սերգեյ Գալոյանն** էր: Հանդիպման նպատակը վերջին շրջանում հեղինակի հրատարակած գրքերն ընկերներին, բարեկամներին եւ ընթերցողներին ներկայացնելն էր: «Սերգեյ Գալոյանին ծանոթ եմ դեռեւս 1960-ականներից, երբ առաջին բանաստեղծություններն էր հրատարակում, ասաց Մշակույթի հայկական ֆոնդի նախագահ Արեւշատ Ավագյանը: Այդ տարիներից նրան ճանաչում եմ իբրեւ պրպտող, հետաքրքրասեր, բարի, անկաշկանդ, ընկերական, նվիրված մարդ, որը տարիների ընթացքում կյանքի պայքարի բովում թրծվեց, պոետական, բանաստեղծական հետաքրքրությունները տեղափոխեց արձակի, առա՛ լրագրողական հետաքննության դաշտ»: Նա խոստովանեց, որ ընկերոջ գրիչն այնքան բեղուն է, որ չի հասցնում կարդալ մի գիրք, եւ սերնին է հաստնում արդեն մյուսը:

Սերգեյ Գալոյանի «Սայթաքուն գլխարարերի վրայով» գիրքը տասը տարիների աշխատանքի արդյունք է: Ինչպես հեղինակն է ասում՝ այստեղ ինքն է, իր բանաստեղծությունները, ու նաեւ մենք՝ բոլորս: «Թեման հոգեբուժարանն է, հոգեկան հիվանդները, ասաց նա, սակայն իրականում մենք բոլորս ենք այնտեղ, չէ՞ որ հոգեբուժարանի մարդիկ ավելի առողջ են, քան մենք՝ դրսում ապրողներս»:

Հետաքրքրական է «Գողական աշխարհ-1» գրքի ստեղծման պատմությունը: Մի օր հրատարակիչ Տիգրան Խաչատրյանն ասում է. «Այդքան շատ ես խոսում գողական աշխարհի մասին, ի՞նչ գիրք ունես»: Սերգեյ Գալոյանը խաբում է, ասում, որ գիրք ունի, սակայն քաղաքից դուրս է գնում, մեկ շաբաթից կվերադառնա, կտա: «Մի քանի պարկ սուրճ, ծխախոտ վերցրեցի, բոլորին տանից դուրս հանեցի, դուռ-պատուհան փակեցի եւ գրեցի», պատմեց Գալոյանը: Հրատարակիչը գիրքն անմիջապես տպագրում է 2000 օրինակ, երկու ամիս անց՝ կրկին նոր օրինակներ, որոնց ժամանակ անց հեղինակը շուկայում նկատում է «Գողական աշխարհ 1»-ի պատճենահանած

տարբերակը, որոշում է գիրքը վերահրատարակել՝ թարմ տվյալներով: Այսօր արդեն տպագրված է «Գողական աշխարհ 2»-ը: Սա նույնպես մեծ պահանջարկ ունի, սեպտեմբերից արդեն 1800 օրինակ է վաճառվել: «Ինչ արած, ասում է գրողը, շուկայի պահանջարկն է այդպիսին: «Սայթաքուն գլխարարերի վրայով»-ն ինձ համար շատ թանկ գիրք է, սակայն չի վաճառվում, շուկան «Գողական աշխարհին» է պահանջում»: Հանդիպման մասնակիցներին ներկայացվեց նաեւ Սերգեյ Գալոյանի «Դարուփոս» երգիծական վիպակը:

Տպագրության է պատրաստ Վարդգես Պետրոսյանի առեղծվածային կյանքի մասին պատմող գիրքը, սակայն հովանավոր դեռեւս չկա: Հեղինակն ասաց, որ այնտեղ ներկայացված փաստերը գրողի, նրա սպանությունը կազմակերպած, իրականացրած մարդկանց մասին է: Պատրաստ է նաեւ գողական աշխարհի ներկայացուցիչ Սվո Ռաֆի (Ռաֆայել Բաղդասարյանի) մասին պատմող գիրքը, որտեղ գրված է նրա ինչպես գողական կյանքի, այնպես էլ հայրենանվեր գործերի մասին: Սերգեյ Գալոյանն ասաց, որ այժմ աշխատում է մի գրքի վրա, որի թեման ոգիներն ու ուրվականներն են:

Բանաստեղծ Արմեն Մարտիրոսյանը գրողին ճանաչում է արդեն մի քանի տասնամյակ: «Ուրախ եմ, որ գրականության խորը գիտելիքներով այդպիսի լավ ընկեր, բանաստեղծ ունենք մեր կողքին, ասաց նա: Ծանոթ եմ Սերգեյի ստեղծագործական ողջ ուղուն եւ կարող եմ ասել, որ վերջին գործերը որքան էլ շուկայական լինեն, դրանց մեջ զգացվում է, որ գործ ունենք հասուն մտքի տեր, պատկերներով աշխարհն ընկալող բանաստեղծի հետ: Երբի այս գործերը եւս հարկավոր են, քանի որ նրանցում մի համընդհանուր բարություն եւ անկեղծություն կա, որ վարակում է ընթերցողին»:

Սերգեյ Գալոյանն իրեն գրող չի համարում: «Ես պարզապես ուսումնասիրող եմ: Կան ինձ հուզող հարցեր, ես պարզապես գրում եմ դրանց մասին»:

ԹԱՄԱՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՄԱՊՐԱՆԿԱՐԴԻ ԱՉՔԵՐՈՎ

Անդրանիկ Ադամյան. «Գլխավոր մեղավորը ես եմ»

Գյումրիի «Շիրակը» միակ թիմն է, որ մասնակցել է Հայաստանի բարձրագույն խմբի բոլոր 13 առաջնություններին՝ 10 անգամ դառնալով մրցանակակիր: Շիրակցիները մրցաշրջանային աղյուսակում 4-րդ հորիզոնականից ցածր տեղ չէին զբաղեցրել: Եվ ահա շատերի համար անսպասելի ընթացիկ մրցաշրջանում «Շիրակը» չափազանց անհաջող հանդես եկավ եւ եզրափակելով մրցաշրջանային աղյուսակը, սխիզված կլինի հրաժեշտ տալ բարձրագույն խմբին: Հանրապետության ամենաստիպողական թիմի ֆուտբոլիստների եւ երկրպագուների համար նման իրավիճակն իրոք ցավալի է: Սովորաբար մրցաշրջանի ավարտից հետո «Շիրակի» անփոփոխ մարզիչ, հմուտ մասնագետ Անդրանիկ Ադամյանը շնորհավորանքներ էր ընդունում առաջնությունում հերթական անգամ մրցանակակիր դառնալու կապակցությամբ: «Կոտայքի» հետ վճռորոշ խաղից հետո դժվար էր մարզչի համար սփոփանքի խոսքեր գտնել: Անդրանիկ Ադամյանը թեեւ անտրամադիր էր, սակայն սիրով համաձայնեց հարցազրույցի:

- Պարոն Ադամյան, որքան էլ որ ցավալի է, սակայն «Շիրակը» չկարողացավ պահպանել իր տեղը ուժեղագույնների խմբում: Որո՞նք են անհաջողության պատճառները:

- Այսօրվա հանդիպումը բախտորոշ էր երկու թիմերի համար էլ: Մեզ ձեռնտու էր ոչ-ոքի արդյունքը, սակայն թիմը չկարողացավ կատարել իր առջեւ դրված խնդիրը: «Կոտայքը» մեզ գերազանցեց բոլոր առումներով՝ եւ տրամադրվածությամբ, եւ բարոյականային որակներով, եւ մարտունակությամբ: Դատի յուրաքանչյուր հաստածում մղվող պայքարում աբովյանցիները հաղթող էին դուրս գալիս: Այս ամենն էլ կանխորոշեցին մրցակցության ելքը: Շնորհավորում եմ «Կոտայքին» բարձրագույն խմբում տեղը պահպանելու համար:

Անհաջողությունն իր օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներն ունի: «Շիրակը» դեռեւս անցյալ տարվանից ֆինանսական միջոցների եւ կազմի հետ կապված խնդիրներ ուներ: Մրցաշրջանի շեմին էլ թիմից հեռացան-փորձառու, առանցքային մի քանի ֆուտբոլիստներ, որոնց բացակայությունը չէր կարող չանդրադառնալ «Շիրակի» մրցելույթների վրա: Թեեւ նրանց փոխարինած երիտասարդ ֆուտբոլիստները մրցաշրջանը վատ չսկսեցին եւ թվում էր, որ թիմը պատրաստ է պայքարելու եթե ոչ մրցանակային, ապա 4-5-րդ տեղերի համար: Սակայն մեզ չհաջողվեց դա իրագործել: Պատճառներից մեկն առաջին հերթին ֆուտբոլիստներն էին



ների մոտ բարոյականային բարձր որակների բացակայությունն էր, որոնք միշտ բնորոշ են եղել գյումրեցիներին: Անհաջողություններն էլ թեւաթափ էին անում տղաներին, որոնք կարծես կորցրել էին վստահությունը սեփական ուժերի նկատմամբ: Բազում սխալներով էին գործում պաշտպանները, իսկ առջեւի գծի խաղացողները շատ հանդիպումներում գոլային իրական պահերը չէին օգտագործում: Այս ամենի արդյունքում «Շիրակը» հայտնվեց աղյուսակի վերջին հորիզոնականում, ինչն անսովոր ու տհաճ է մեզ համար: Այս ամենի համար միայն ինքներս ենք մեղավոր եւ որպես գլխավոր մարզիչ ողջ պատասխանատվությունն ինձ վրա եմ վերցնում:

Անհաջող մրցաշրջանից հարկ է համապատասխան հետեւություններ հանգել, լուրջ աշխատանք տանել թիմի բարի անունը, սասանված հեղինակությունը վերականգնելու համար:

- Ինչպիսի՞ն են տպավորությունները ավարտվող մրցաշրջանից:

- Նախ օգտվելով առիթից շնորհավորում եմ առաջնության մրցանակակիրներին: Առաջնությունը կրկին հաստատեց, որ «Փյունիկը» հանրապետության անվիճելի առաջատարն է: Տավոր, առաջատար մյուս թիմերի խաղամակարդակն իջել է, առաջխաղացում չի նկատվում: Դրա հետեւանքն էր, որ մյուս թիմերը բավական լրջորեն դիմադրեցին առաջատարներին: Մրցանակային տեղերի համար պայքարն էլ շատ թեժ չէր: Լավագույնն ավելի մեծ էր աղյուսակի ստորին հորիզոնականներում:

- Հնարավո՞ր է, որ «Շիրակին» թողնեն բարձրագույն խմբում ավելացնելով թիմերի քանակը:

- Դա ֆեդերացիայի որոշելիք խնդիրն է: Գուցե հաշվի առնեն այն հանգամանքը, որ «Շիրակը» բարձրագույն խմբում հանրապետության մարզերը ներկայացնող միակ թիմն է: Չգիտեմ, թե հարցն ինչ լուծում կստանա, սակայն ակնհայտ է, որ լրջորեն պետք է մտածել նաեւ մարզերում ֆուտբոլը զարգացնելու մասին: Ամուր հիմքեր պետք է ստեղծվեն հետագա աշխատանքների շարունակման համար: Իսկ մենք, անկախ այն բանից, թե որ խմբում հանդես կգանք, պետք է անպայման ձգտենք բարձր արդյունքների:

«Փյունիկը» գերազանցեց «Միլանի» ռեկորդը

Երկրի յոթնակի չեմպիոն Երեւանի «Փյունիկն» արդեն 2 մրցաշրջան հանդես է գալիս առանց պարտության: Առաջնության ավարտական տուրում ոչ-ոքի խաղալով «Կիլիկիայի» հետ, փյունիկցիներն իրենց անպարտելի խաղերի քանակը հասցրին 59-ի եւ կրկնեցին Գյումրու «Շիրակի» ռեկորդը, որը սահմանվել էր 1993-95 թթ. ընթացքում: Հետաքրքրական է, որ Հայաստանի առաջնություններում վերջին անգամ «Փյունիկը» պարտվել էր հենց «Շիրակից»՝ 2002 թ. հոկտեմբերի 9-ին Գյումրիում զիջելով 0-1 հաշվով: «Փյունիկն» ընթացիկ առաջնությունում դեռ 2 խաղ ունի անցկացնելու, ուստի կարող է գերազանցել «Շիրակի» ռեկորդը:

«Փյունիկի» ռեկորդը իրոք տպավորիչ է: Հետաքրքրական է, որ հանրահայտ «Միլանի» նմանատիպ ռեկորդն Իտալիայի առաջնություններում 58 խաղ է: Այնպես որ «Փյունիկը» գերազանցեց «Միլանի» ռեկորդը: Վերջերս «Արսենալն» Անգլիայում անպարտելիության նոր ռեկորդ սահմանեց՝ 49 խաղ անընդմեջ մրցակիցներին չէր հաջողվում հաղթել երկրի չեմպիոնին: Եվ միայն «Մանչեսթր յունայթեդին» հաջողվեց ընդհատել «Արսենալի» հաղթարշավը:

Հետաքրքրասերներին տեղեկացնենք, որ անպարտելի խաղերի թվով ռեկորդային ցուցանիշն աշխարհում պատկանում է Կոն դ'Իվուարի չեմպիոն ԱՍԵԿ-ին: Այդ թիմը 1989-1994 թթ. երկրի առաջնություններում 108 խաղում չի պարտվել: Տպավորիչ է նաեւ Ռումինիայի չեմպիոն «Ստյաուայի» ցուցանիշը՝ 104 խաղ: «Փյունիկն» անկասկած լավ հնարավորություն ունի ավելացնելու իր անպարտելի խաղերի քանակը եւ ստորեւ ներկայացվող ցուցակում ավելի բարձր դիրք զբաղեցնելու: Ներկայացնում ենք անպարտելի խաղերի թվով աշխարհում լավագույն արդյունքի հասած թիմերի ցուցանիշները: Նկատենք, որ այդ ցուցակում Հայաստանից ընդգրկված են 3 թիմեր:

Թիմը	Երկիրը	Մրցաշրջանները	Խաղ
ԱՍԵԿ	Կոտ դ'Իվուար	1989-1994	108
«Ստյաուա»	Ռումինիա	1986-1989	104
«Էսպերանս»	Թունիս	1997-2001	85
«Սելթիկ»	Շոտլանդիա	1915-1917	62
«Շիրակ»	Հայաստան	1993-1995	59
«Փյունիկ»	Հայաստան	2002-2004	59
«Միլան»	Իտալիա	1991-1993	58
«Օլիմպիա.»	Հունաստան	1972-1974	58
«Բենֆիկա»	Պորտուգալիա	1976-1978	56
«Պորտո»	Պորտուգալիա	1994-1996	53
«Այաքս»	Հոլանդիա	1994-1996	52
«Սպարտա»	Չեխիա	1920-1923	51
«Ցվենա զ.»	Հարավսլավիա	1999-2001	51
«Արսենալ»	Անգլիա	2003-2004	49
«Արարատ»	Հայաստան	1992-1994	44

Կասանոյի շուրջ կրքերը բորբոքվում են

«Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսը բանակցում է «Ռոմայի» հետ Անտոնիո Կասանոյի հարցով: Նա պատրաստ է ֆուտբոլիստի դիմաց որոշ գումար վճարել «Ռոմային», ինչպես նաեւ իտալական գումար վճարել «Ռոմային», ինչպես նաեւ իտալական ակումբին տրամադրել Ֆեռնանդո Մորենտեսին:

Կասանոյով հետաքրքրվում է նաեւ «Չելսին», որը պատրաստ է նրա համար «Ռոմային» 30 մլն ֆունտ ստեռլինգ վճարել: Ռոման Աբրամովիչի ակումբը Կասանոյին դիտում է որպես թիմից հեռացված Ադրիան Մուտուի փոխարինող:

ՀԱՄԱՍ

Սիրանուշ Անդրեասյանը զիջեց դիրքերը

Հունաստանում անցկացվող շախմատի աշխարհի պատանեկան առաջնության 6-րդ տուրում հայ շախմատիստներն ընդհանուր առմամբ վատ հանդես չեկան: Անցկացրած 21 պարտիաներից 10-ն ավարտվեց մեր շախմատիստների հաղթանակով, 4-ում գրանցվեց ոչ-ոքի, 7-ում Հայաստանի ներկայացուցիչները պարտվեցին: Ցավալին այն է, որ անհաջողության մատնվեցին հիմնականում առաջատարների շարքում գտնվող մեր շախմատիստները: Այսպես, մինչեւ 18 տարեկան աղջիկների մրցաշարում 4,5 միավոր ունեցող Սիրանուշ Անդրեասյանը պարտություն կրեց եւ այժմ 5-րդ տեղում է: Նա աղյուսակը գլխավորող վիետնամցի Նգուեն Պամից հետ է մնում մեկ միավորով: 5-ական միավոր են վաստակել 2-4-րդ տեղերը բաժանող Սալոմե Մելիան (Վրաստան), ֆրանսիացի Մարիա Սեբագը եւ ուկրաինացի Նատալյա Գրիգորենկոն:

Մինչեւ 10 տարեկան պատանիների մրցաշարին մասնակցող Ռոբերտ Աղասարյանն էլ ճաշակեց պարտության դառնությունը: 6 տուրից հետո նա 4,5 միավորով բաժանում է 9-18-րդ տեղերը: Հաղթանակներ տոնելով, Ռոբերտին միավորներով հավասարվեցին Տիգրան Պետոսյանն ու Դավիթ Շահինյանը, իսկ ահա խաչատուր Երանյանին չհաջողվեց ավելացնել միավորների իր պաշարը (4)՝ զիջելով մրցակցին: Այս խմբում առաջատարը չին շախմատիստ Յու Յանգուին է, որը տոնեց 6-րդ անընդմեջ հաղթանակը: 2140 անհատական վարկանիշ ունեցող այս շախմատիստը չեմպիոնի կոչման համար լուրջ հայտ է ներկայացրել: Նրանից կես միավորով հետ է մնում իր հայրենակիցը՝ Չեն Պենգը:

Մինչեւ 14 տարեկան տղաների մրցաշարի մեր երկու մասնակիցներն էլ վաստակել են 4,5-ական միավոր: Հայր Սիմոնյանը պարտիան ավարտեց ոչ-ոքի, իսկ Հովիկ Հայրապետյանը հաղթեց: Նրանք ընդամենը մեկ միավորով են զիջում առաջատարին՝ ամերիկացի Դանիել Լուդվիգին:

Վատ հանդես չեն գալիս մինչեւ 12 տարեկան տղաների մրցաշարի մասնակիցներ Հայկ Վարդանյանն ու Սամվել Տեր-Սահակյանը, որոնք հաղթանակներ տոնելով, 4,5-ական միավորով բաժանում են 6-19-րդ տեղերը: Իսկ առաջատարը 100 տոկոսանոց արդյունքով հնդիկ շախմատիստ Պարիմարջան Նեգին է: Ավետիք Գրիգորյանն էլ (մինչեւ 16 տարեկաններ) հաղթելով մրցակցին, 4,5 միավորով առաջատարների խմբում է: Մրցաշարային աղյուսակը 5,5 միավորով գլխավորում է բուլղարացի Վալենտին Յոտովը:

Մեր ութ շախմատիստուհիներից Սիրանուշ Անդրեասյանից հետո լավագույն արդյունքն ունի ամենակրտսեր տարիքային խմբում հանդես եկող Մարիա Գետրգյանը (4 միավոր), որը 6-րդ տուրում հաջողության հասավ: Տարիքային այս խմբում 6 միավորով առաջատարը վրաց շախմատիստուհի Մարի Արաբիձեն է:

Հրապարակվել է թեկնածուների ցանկը

Ֆրանսիական L'Equipe մարզական օրաթերթը հրապարակել է այն 50 ֆուտբոլիստների նախնական ցանկը, որոնք հավակնում են Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի համար սահմանված «Ոսկե գնդակ» մրցանակին: Այդ ցանկում ընդգրկված են Եվրոպայի չեմպիոնի կոչմանն արժանացած Հունաստանի հավաքականի վեց ֆուտբոլիստներ՝ Տրայանոս Դելասը, Անգելոս Խարիստեասը, Միխալիս Կապսիսը, Անտոնիս Նիկոպոլիդիսը, Յուրկաս Սեյտարիդիսը եւ Թեոդորոս Զագորակիսը: Ցուցակում 6 ֆուտբոլիստով է ներկայացված նաեւ Ֆրանսիան, որի ներկայացուցիչներից առավել հայտնի են Զինեդին Զիդանը, Թիերի Անրին եւ Պատրիկ Վիեյրան: Հիշեցնենք, որ մրցաշրջան-2003-ի արդյունքներով Զիդանը ճանաչվել էր աշխարհի լավագույն ֆուտբոլիստ, իսկ «Ոսկե գնդակի» դափնեկիրը «Յուվենտուսի» եւ Չեխիայի հավաքականի կիսապաշտպան Պավել Նեդվեդն էր:

«Ոսկե գնդակի» հավակնորդների ցուցակում բոլորից շատ ներկայացուցիչ ունի Բրազիլիան (7 ֆուտբոլիստ): Այս տարի էլ նշվել են Ռոնալդոյի, Ռոբերտո Կառլոսի, Կակայի, Ադրիանոյի ազգանունները: Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստը կորոշվի դեկտեմբերին անցկացվելիք հարցման արդյունքներով:

Լավագույն ութնյակը սկսում է մրցավեճը

Այսօր Լոս Անջելեսում մեկնարկում է կանանց թենիսի աշխարհի ոչ պաշտոնական առաջնությունը, որով ավանդաբար թենիսիստուհիներն ավարտում են մրցաշրջանը: Աշխարհի ուժեղագույն թենիսիստուհու կոչումը վիճարկում են մրցաշրջանի արդյունքներով լավագույն ցուցանիշներն ունեցող 8 մարզուհիները: Ճիշտ է, այս անգամ նրանց թվում է հայտնվել դասակարգման ցուցակում 9-րդ տեղում ընթացող Վերա Զվոնարյովան, որը փոխարինել է վնասվածք ստացած Ժյուստին Էնենին, որը 7-րդ հորիզոնականում էր:

8 թենիսիստուհիներից 5-ը ներկայացնում են Ռուսաստանը, ինչը ռուսական կանանց թենիսի մեծ առաջընթացի վառ վկայությունն է: Համեմատության համար նշենք, որ անցյալ տարվա մրցաշրջանում ընդամենը երկու ռուսաստանցի էր հանդես գալիս: Մրցակարգի համաձայն, նախնական փուլում մասնակիցները բաժանվել են 2 խմբի: «Կարմիր» խմբում ընդգրկվել են Լինդսեյ Դեւենպորտը, Անաստասիա Միսկինան, Ելենա Դեմենտեւան եւ Սերենա Ուիլյամսը: «Սեւ» խմբում կիսաեզրափակիչի երկու ուղեգրերի համար կպայքարեն Ամելի Մորեսմոն, Սվետլանա Կուզնեցովան, Մարիա Շարապովան եւ Վերա Զվոնարյովան: Նշենք, որ մասնակիցներից երկուսին՝ Սերենա Ուիլյամսին (2001 թ.) եւ Լինդսեյ Դեւենպորտին (1999 թ.) նախկինում հաջողվել է հաղթող ճանաչվել այս մրցաշարում:

Մրցաշարի մրցանակային հիմնադրամը 3 մլն դոլար է, որից մեկ միլիոնը կստանա չեմպիոնուհին: Լինդսեյ Դեւենպորտին մրցաշարի բացման ժամանակ կհանձնվի Porsche Cayenne մակնիշի ավտոմեքենա որպես տարվա արդյունքներով դասակարգման ցուցակի առաջատար: Հետաքրքրական է, որ եթե հաշվի առնենք թենիսիստուհիների միջեւ անձնական հանդիպումների արդյունքները, ապա «կարմիր» խմբում հաղթողի գլխավոր հավակնորդ պետք է համարել Սերենա Ուիլյամսին, որն իր մրցակցուհիների նկատմամբ առավելություն ունի (Դեւենպորտ՝ 9–3, Միսկինա՝ 2–0, Դեմենտեւա՝ 3–0): «Սեւ» խմբում անվիճելի առաջատարը Մորեսմոն է, որը Կուզնեցովայի եւ Զվոնարյովայի հետ անցկացրած բոլոր 8 հանդիպումներն էլ շահել է, իսկ Շարապովայի հետ դեռեւս չի մրցել:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Հայաստանը հարմար չէ փողալվացման համար

Փաստում է Տիգրան Սարգսյանը

Ունենալու են՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենք, քանի որ առաջին մասով դույթներ կան «Կենտրոնական բանկի» եւ «Բանկերի ու բանկային գործունեության մասին» օրենքներում, երկրորդ մասը ենթադրում են միջազգային մի քանի համաձայնագրեր, որոնք վավերացրել է Ազգային ժողովը: Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանի կարծիքով, Հայաստանի Հանրապետությունը դեռեւս փողալվացման ու ահաբեկչության ֆինանսավորման տեսանկյունից վտանգված չէ, սակայն օրինագիծը կարեւոր է դրանց կանխարգելման տեսանկյունից:

Օրինագիծը հասկեցնելու է իրավական դաշտը, առեւտրային բանկերը հանդես են գալու որպես փողալվացման դեմ պայքարի գործակալներ, վարկային կազմակերպությունները կանխարգելիչ միջոցներ պետք է ձեռնարկեն: Իսկ ընդհանուր ֆինանսական հոսքերի տեղեկատվությունը կուտակվելու է միասնական ֆինանսական մոնիտորինգի կենտրոնում, որը ստեղծվելու է հենց ԿԲ-ում: Տիգրան Սարգսյանի բացատրությամբ դա կբացառի լրացուցիչ վարչական ծախսերը, քանի որ ՀՀ ֆինանսական հոսքերի 95 տոկոսն առկա է հենց ԿԲ-ում:

«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման եւ ահաբեկչության ֆինանսավորման հեղինակները գիտեն, որ ՀՀ-ն իրենց գործունեության համար նպաստավոր դաշտ չէ, քանի որ ունի ֆինանսական փոքր հոսքեր», հավաստեց Տիգրան Սարգսյանը:

Ն. Պ.

ՀԴՄ-ների ժամանակը չի եկել

Գտնում է «Ժողպատգամավոր»

Խորհրդարանական ընթացիկ եռօրյայի հերթական նիստում քվեարկությունների դրական արդյունքով երրորդ ընթերցում անցան աշխատանքային եւ ընտանեկան օրենսգրքերը: «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» օրինագծի քվեարկությունն էլ ձայները հետեւյալ կերպ բաշխեց՝ 78 կողմ, 11 դեմ, 0 ձեռնպահ: «Ժողովրդական պատգամավոր» պատգամավորական խումբը քվեարկությունից առաջ կողմնորոշվելու ժամանակ խնդրեց եւ 20 րոպեում որոշեց քվեարկել «ՀԴՄ-ների կիրառման մասին» օրենքի դեմ: Ժողպատգամավոր խմբի քարտուղար **Վահրամ Բաղդասարյանի** նման կողմնորոշումն ընդամենը քաղաքական արտահայտում է, որը «Ժողպատգամավոր» խումբն օգտագործել է նաեւ առաջներում: Ու չնայած ժողպատգամավորներն են հենց տնտեսական դաշտի հավատարեցման ջատագովները, սակայն չէին կարող համաձայնել առաջարկվող օրինագծին, քանի որ այն քաղաքացիներին վայել լինելով հանդերձ չի տեղայնացվել եւ Հայաստանի Հանրապետությունում պարզապես չի գործի, հավաստեց Վահրամ Բաղդասարյանը: Նա նաեւ հավելեց, որ զուր են լրատվամիջոցներն այս կողմնորոշման հենքում անձնական շահեր փնտրում ու գտնում, քանի որ դրանք իրականում չկան: Իսկ «Ժողպատգամավոր» խմբի ղեկավար Կարեն Կարապետյանը նախորդ քվեարկության ժամանակ ներկա էլ չի եղել, այլ պարզապես կարծիք է հայտնել: Կարեն Կարապետյանը գտնում է, որ «ՀԴՄ-ների կիրառման մասին» օրինագիծը տնտեսական դաշտի անհրաժեշտ հավատարություն չի ապահովում ոչ փուլային կիրառման, ոչ էլ գոտեւորված մոտեցումների հաշվին: Բացի այդ «Ժողպատգամավորը» գտնում է, որ երկրի տնտեսական, սոցիալական խնդիրներն ու հասարակության պատասխանատվությունն առայժմ թույլ չեն տա այս օրենքի կիրառումը եւ հարկավոր է ընտրել դրա համար հարմար ժամանակ:

Ն. Պ.

Մայրուղին երկարեց 14 կիլոմետրով

Արցախի ողնաշարը համարվող «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու եւ մի հատված շահագործման հանձնվեց: Երեկ տեղի ունեցավ Սարուշեն-Կարմիր շուկա 14 կիլոմետրանոց հատվածի հանդիսավոր բացման արարողությունը, որին մասնակցում էր նաեւ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

ԼՂՀ նախագահ **Արկադի Ղուկասյանը** կարեւորելով մայրուղու ռազմավարական նշանակությունը, խորհրդանշական համարեց, որ դրա կառուցմանը մասնակցում է համայն հայությունը: Նա հույս հայտնեց, որ ածող աջակցության պայմաններում 1-2 տարում կավարտվի մայրուղու շինարարությունը: Մի քանի օր հետո տեղի ունենալիք հեռատամարաթոնը, ըստ ԼՂՀ նախագահի, կամրագրի այս սպասումները, որի իրատեսական հիմքը համայն հայության պատասխանատվությունն է: Ա. Ղուկասյանը նաեւ շնորհակալություն հայտնեց ՀՀ նախագահին, որի ներդումն այս բոլոր աշխատանքներում շատ մեծ է:

Նոր ճանապարհահատվածը կառուցել է «Քարավան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Նույն այս ընկերության կողմից շահագործման է հանձնվել եւ արդեն գործում է մայրուղու Բերձոր-Այգեստան հատվածը:

Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ,
Մեդիատակերս

Կարեւոր է ոչ միայն եվրոպական, այլեւ չինական շուկան

Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատը Եվրոպալատի՝ հոկտեմբերի 20-ին տեղի ունեցած լիագումար նիստի ընթացքում միաձայն ընտրվեց այդ կառույցի լիիրավ անդամ: Եվրոպալատը հիմնադրվել է 1958 թվականին եւ իր կազմում ընդգրկում է շուրջ 4000 անդամ: ԱՊՀ երկրներից Եվրոպալատի անդամ են միայն Ռուսաստանը, Բելառուսը եւ Մոլդովան: «Այս պալատին անդամակցելը նոր հնարավորություն է ստեղծում տեղ գտնելու եվրոպական շուկայում», նշում է Հայաստանի ԱԱՊ նախագահ **Մարտին Սարգսյանը:**

Եվրոպական շուկայում հաստատվելու նպատակով ՀՀ ԱԱՊ-ի ներկայացուցիչները հոկտեմբերի սկզբին մեկնել էին Հոլանդիա, ուր բացվել է ԱՊՀ երկրների բիզնես պլացդարմ: Թեպետ Հոլանդիայում իրենց ներկայացուցիչներն ունեն ԱՊՀ երկրների բոլոր ԱԱՊ-ները, սակայն ողջ ինֆորմացիան կուտակվում է Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատում, քանի որ վերջինս է թե՛ ծրագրի առաջարկողը, թե՛ իրականացնողը: Այցի ընթացքում հանդիպում է տեղի ունեցել աշխարհում իր մեծությամբ երկրորդ «Ստարդիուս» արդիական ընկերության ներկայացուցիչների հետ: Այս ընկերությունն ապահովագրում է եւ մինչեւ 10 մլն դոլարի սահմաններում վարկ վերցնող ընկերությանը, եւ բանկին: «Քննարկեցինք մեր պալատի կազմած «Վստահելի գործընկեր» ծրագիրը, որի էությունը հետեւյալն է՝ որեւէ ընկերությանը տալով «Վստահելի գործընկեր» վկայագիրը, մենք նրա գործը փոխանցում ենք «Ստարդիուս» ընկերությանը, որի համար այդ վկայագիրը լրացուցիչ խթան կհանդիսանա ապահովագրման համար», ասում է Մարտին Սարգսյանը:

Հայաստանի ԱԱՊ-ի ներկայացուցիչները հանդիպել են նաեւ Հոլանդիայի «300-ի ակումբի» գործարարների եւ ներդրումային կազմակերպության ղեկավարության հետ, որոնց ներկայացրել են 20-ից ավելի ծրագրեր: Դեկտեմբերին նախատեսվում է Հոլանդիայի գործարարների փոխադարձ այցը Հայաստան, որի ընթացքում կստորագրվեն կոնկրետ պայմանագրեր:

«Եվրոպական շուկայում հաստատվելու խոչընդոտներից բացի, մեզ համար չափազանց կարեւոր է օրըստօրե հզորացող չինական շուկայում տեղ գտնելը: Այսօր արդեն Շանհայը աշխարհի կարեւորագույն տնտեսական գոտիներից է: Նախագահի Չինաստան կատարած այցի շրջանակներում հանդիպում ենք ունեցել տեղի ԱԱՊ-ի նախագահի հետ եւ պայմանավորվածություն ենք ձեռք բերել բացելու մեր պալատի ներկայացուցչությունը», նշում է Մարտին Սարգսյանը:

Հայաստանի կառավարության որոշման համաձայն Արտակունյաց եւ Բագրատունյաց փողոցների խաչմերուկում ՀՀ ԱԱՊ տարածք է տրամադրվել՝ մշտական գործող ցուցահանդեսային կենտրոն ստեղծելու նպատակով: «Տարածքը վերակառուցման կարիք ունի եւ մենք բանավոր պայմանավորվածություն ենք ձեռք բերել Ռուսաստանի ԱԱՊ-ի հետ համատեղ կենտրոն ստեղծելու վերաբերյալ», փաստում է Մարտին Սարգսյանը: Նախագծի համաձայն կենտրոնում լինելու է ոչ միայն գործող ցուցահանդես, այլեւ կազմակերպվելու են տարբեր միջոցառումներ եւ բիզնես ֆորումներ: Այս կենտրոնի ստեղծումը հնարավորություն կտա անդամակցելու Համաշխարհային ցուցահանդեսային ասոցիացիային եւ մասնակցելու միջազգային էքսպո-ցուցահանդեսներին:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ,

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Դրամավարկային տեղեկատու

Հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում դրամավարկային ցուցանիշները հետեւյալն էին.

Դրամական բազա, դրամական զանգված

Փողի բազան աճել է 5 մլդ 177 մլն դրամով եւ նոյեմբերի 4-ն ի կազմել 117 մլդ 788 մլն դրամ: Զուտ արտաքին ակտիվները (առանց սեփականաշնորհման միջոցների) աճել են 1 մլդ 751 մլն դրամով, իսկ զուտ ներքին ակտիվները՝ 3 մլդ 426 մլն դրամով:

Հոկտեմբերի 22-30-ն ընկած ժամանակահատվածում փողի զանգվածն աճել է 4 մլդ 444 մլն դրամով եւ հոկտեմբերի 30-ին կազմել 257 մլդ 211 մլն դրամ (ընդգրկված են 19 բանկերի ցուցանիշները): Շրջանառության մեջ կանխիկ դրամը նախորդ շաբաթվա համեմատ աճել է 1 մլդ 26 մլն դրամով, կազմելով 87 մլդ 638 մլն դրամ: Դրամով ցպահանջ ավանդները աճել են 2 մլդ 39 մլն դրամով եւ կազմել 32 մլդ 616 մլն դրամ: Դրամով ժամկետային ավանդները նվազել են 368 մլն դրամով եւ կազմել 9 մլդ 199 մլն դրամ: Արտարժույթով ավանդները աճել են 1 մլդ 747 մլն դրամով եւ կազմել 127 մլդ 758 մլն դրամին համարժեք արտարժույթ: Ընդ որում, արտարժութային ցպահանջ ավանդները կազմել են 66 մլդ 292 մլն դրամ (նախորդ շաբաթվա համեմատ աճել են 781 մլն դրամով), ժամկետայինները՝ 61 մլդ 467 մլն դրամ (աճը՝ 966 մլն դրամ):

Ֆինանսական շուկա

Հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում մուտքել է 600 մլն դրամի 51-շաբաթյա ՊՊ՝ 10,1422 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Արտարժույթի շուկա

Հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքը չի փոփոխվել:

Նշված ժամանակահատվածում արժութային շուկայում իրականացվել են շուրջ 56,200 հազ ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի գործարքներ, որոնց միջին կշռված փոխարժեքը կազմել է 503,87 դրամ:

Շաբաթվա ընթացքում ԿԲ-ը գնել է 2 մլն ՈՌ ռուբլի՝ 17,48 դրամ փոխարժեքով եւ 3 մլն 400 հազ ԱՄՆ դոլար՝ 504,66 դրամ փոխարժեքով:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ՀՀ ԿԲ խորհրդի նիստում

ԿԲ խորհուրդը նոյեմբերի 9-ի նիստում հաստատեց ՀՀ հաշվառիակական հաշվառման թիվ 37 եւ 39 ստանդարտները բանկերի եւ վարկային կազմակերպությունների համար, հավանություն տվեց «ՀՀ ԿԲ-ում ֆինանսական համակարգի կայունության ապահովման կառուցվածքի հայեցակարգին», լրացում կատարեց «Անվճարունակ բանկերի եւ վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձեւավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները» կանոնակարգ 7-ում:

Խորհուրդը համաձայնություն տվեց «ԱՐԴԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության վայրի փոփոխությանը՝ ք. Երեւան, Գ. Լուսավորչի 13 եւ Գ. Լուսավորչի 13/1 հասցեով:

ԿԲ խորհրդի որոշմամբ «ՀԱՄՆԱՐ» ՍՊԸ-ին, անհատ ձեռնարկատերեր Սիմոն Մինասյանին եւ Հայրապետ Պետրոսյանին տրամադրվեցին արտարժույթի առք ու վաճառք իրականացնելու լիցենզիաներ, իսկ անհատ ձեռնարկատեր Վլադիկ Պողոսյանին՝ այլ վայրում եւ արտարժույթի առք ու վաճառք իրականացնելու լիցենզիա:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

USAID-ի կողմից ֆինանսավորվող FINCA հիմնադրամը

հայտարարում է մրցույթ՝

փոխառությունների բաժնի օգնականի թափուր տեղի համար:

Թեկնածուներից պահանջվում է հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների գերազանց իմացություն, ինչպես նաեւ Word, Excel, Access ծրագրերի կատարյալ տիրապետում: Աշխատանքային պարտականություններն են՝

1. աշխատանք տվյալների բազայի հետ
2. ինաուգուրացիաների անցկացում
3. թարգմանություններ

Համառոտ բնութագրերը ներկայացնել FINCA, հեռեյալ հասցեով. Ագաթանգեղոսի 2ա (Սպարտակ մարզակոմբի հարեւանությամբ): Հեռախոս՝ 58 48 63, 54 55 31

Դիմումների ներկայացման վերջին ժամկետն է՝ 16.11.2004-ը:

Ի գիտություն հասարակության

«Հիդրո կորպորացիա» ՍՊԸ-ն դիմել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովին՝ Գեղարքունիքի մարզի Արգիճի գետի վրա ՓՀԷԿ կառուցելու ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

Բոլոր շահագրգիռ անձինք կարող են դիմել ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովին:

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ (ԲՀԻՕՀՀՄ)

Կենտրոնական Եվրոպական համալսարանի Ուսումնական ծրագրերի մշակման կենտրոնը՝ Բաց հասարակության ինստիտուտի «Աջակցություն բարձրագույն կրթությանը» ծրագրի օժանդակությամբ, հայտարարում է դասընթացների մշակման եւ դասավանդման համար: Ծրագրի նպատակն է՝ աջակցել նորարարական դասընթացների մշակմանն ու կիրառմանը Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայում, նախկին խորհրդային Միությունում եւ Մոնղոլիայում, ինչպես նաեւ աջակցել սույն տարածաշրջանի գիտնականների միջառարկայական եւ միջազգային համագործակցությանը:

Մրցույթը կընդգրկի հետեւյալ բնագավառները. շրջակա միջավայրի եւ կայուն զարգացման վերաբերյալ ոլորտներ, գրականություն եւ գենդեր, պատմություն, խաղաղագիտություն/միջազգային հարաբերություններ, վերլուծական փիլիսոփայություն, կոսմոլոգիա:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել անհատական կամ խմբային հայտ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2004 թ. նոյեմբերի 22-ը, ժ. 18:00:

Հայտի հասցեն ձեւը, ինչպես նաեւ հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ http://www.osi.am ինտերնետային կայքում կամ ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակում, հետեւյալ հասցեով՝ **Երեւան 10, Պուշկինի 1, բն. 2, հեռ. 542-119, 541-719, 543-901;**

e-mail: ***armenuhi@osi.am***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 9.11.2004 Գինը՝ 100 դրամ